



539 F.

Digitised by  
A.R.A.R. @

1199-44

# ՀԱՅՈՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԵՅ

ՆԱՄԱԿՆԵՐ



ՍՈՒՐԲ ԽՈՐԴՈՒՅՑՍ ՎՐԵՅ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՅՈՒԹԵԱՆ

ՏԵՏՐԵԿ Բ.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՅՈՒՀԱՆՈՒ ՊՐՈՒՍԱՑԻՈՅ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԶԱՄՈՒՌԵԱՆՑ



ՀՐԱՄԱՆԱԿ ՏԵԱՌԻ ՄԱՏԹԵՈՍԻ

ԱՌԱՔԵԼԱՀԱԿԻ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐքԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԱՆ



Դ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԱՆ

Դ ՏՊԱՐԱՆԻ ՅՈՒՀԱՆՈՒ ՄՏԻՀԵՆՏՍԵԱՆ

= 1846 =

digitised by A.R.A.R. @

12995

ՕՐԻՆԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԵՂՄԱՆԱԿԱՐԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԵՂՄԱՆԱԿԱՐԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՂՄԱՆԱԿԱՐԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



564-2009

# ՄԵՍՆ Բ.

## ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

## ԴԵՐ Դ.

10. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԴ 2

Կասոր ոչ համառօտ և ոչ ընդարձակ  
պատմութիւնը ընելու կարօտ չեմք . ա-  
մեն մարդ կը ճանաչէ որ Հայոց աղքը հա-  
ւասքի բերող և քրիստոնէութիւն սորվե-  
ցընողը այս երանելիս է . անոր համար  
Հայոց եկեղեցին կ'երգէ երանելի հայրա-  
պետիս տօնախմբութե օրը . “ Առաջնորդ  
” հաւատոց և լուսաւորիչ անձանց մերոց ”  
(Ըստական . կանոն , հե ) : Եւ թէ որ սրբոյն  
Պօղոսի առաքելոյ խօսքը պիտի բըռնեմք  
նէ՝ որ կ'ըսէ . “ Յիշեցէք զառաջնորդս ձեր  
” որք խօսեցան ձեզ զըանն Աստուծոյ , հա-  
” յեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողչ եղէ-  
” րուչ հաւապոցն ” (Եֆր . Ժդ . 7 ), այս երա-  
նելիիս հաւատքը սորվելէն ետքը պարտա-  
կան եմք անոր նման հաւատալու , ինչպէս  
որ ինքն ալիրմէ առաջ եղողներուն պէս  
հաւատաց . ինչպէս որ անոնք ալ իրենց  
նախորդներուն պէս հաւատացին մինչեւ  
առաքելոց ժամանակը , և մինչեւ Քրիս-

տոսի ատենը : Երանելոյս ծընունդն է Քրիստոսի 257 թուին . չարչարանք քաշելը հաւատքի համար՝ 286 թուին . խոր վիրապէն ելել և քրիստոսական հաւատքը չայոց ազգին քարողելլ՝ 301 թուին . և 30 տարի հոգեւոր հովուութի ընելէն եաբը իրեն հոգեւոր որդւոյը վրայ , ինքն ալ 74 տարվան ծերութեան հասակին հասած ըլլալով՝ ազգին հոգեւոր պաշտօնը իր Արիստակէս տղուն յանձնելով Անպուհ լեռը կ'առանձնանայ . և հոն կը վախճանի : Առ հուանը Ճիշդ թուականը չի գիտցըվիր :

Տրդատ թագաւորը տսիկայ ուղեց որ կուապաշտութեան դարձընէ . Երանելիս իր հաւատքին վրայ ամուր կենալով բազմաթիւ չարչարանքներ քաշեց . և չարչարանքին մէկն ալ այն էր՝ որ մէկ ոտքէն կախեցին , գլխուն տակը գարշահոտ բաներ կը ծխէին . մէկ դիէն ալ դաշար գաւազաններով տասն հոգի զինքը կը ծեծէին . և այս չարչարանքիս մէջ մնաց եօթն օր : Այս միջոցիս Երկար և ոգէշարժ աղօթք մը խօսեցաւ Երանելին , և համառօտագիր դրագիրներ հոն նստելով՝ բերնէն ելած խօսքերը շուտ մը կը գրէին . որ եաբը տարին թագաւորին տուին , ինչպէս որ կը պատմէ Ագաթանգեղոս (Պատմ. հայոց . Գլ. ը. Եղլ. 85. 86 . պատմ. Անկար . 1835) : Այս աղօթքս Ագաթանգեղոս՝ ամբողջ կը գրէ իր պատմուեր կարգին (Թաղլ. 61 . 85) : Այս Ագաթան-

գեղոս՝ Տրդատ թագաւորին գրագիրն էր .  
ինչպէս որ կ'ըսէ խորենացին (Պատմ. բ. 67 .  
դպ. Վ. Հնկա. 1827) . և ինքն ալ կ'ըսէ՝ որ  
“Ոչինչ կարի անտեղեակ լեալ ձեռնար-  
”կութեան նշանագրաց ” (Աժաթան . Եղվ .  
15) . ըսելէ որ՝ համառօտագրութեան ալ  
հմուտ էր . և պատմութիւնը նոյն Տրդա-  
տայ հրամանաւը գրեց , ուստի | ուսաւոր-  
չին աղօթքն ալ ինչ որ երանելոյն բերնեն  
ելաւ նէ՝ այն գրած պիտի ըլլայ . կարելի է՝  
որ աղօթքը զրուցած ատենը հոն գըտնը-  
վող գրագիրներէն եղած ըլլայ . և այն ա-  
տենը այս աղօթքիս համար ալ կը յարմարի  
Ագաթանգեղոսի ըսելը . “ Ըստ օրինակի  
” գրելոց առ ՚ի մէնջ ոչ եթէ ՚ի հին համ-  
” բաւուց տեղեկացեալք մատենագրել ,  
” այլ մեզէն իսկ ականատես կերպարանաց  
” և առընթերակայ հոգեւորական գործոցն  
” լուսաւոր շնորհապատում վարդապե-  
” տութեն ” (անդ . Եղվ . 18) : Ագաթան-  
գեղոս հոն գըտնըված չըլլայ ալ նէ՝ թա-  
գաւորական գիւանէն ասոր արձանագիրը  
առնելուն և պատմութեանը կարգը գընե-  
լուն ամենեւին կարծիք չկայ . ուստի ա-  
ղօթքին խօսքը բուն իսկ սուրբ | ուսա-  
ւորչին խօսքերն են :

Այս աղօթքիս կարգը երանելի հայրա-  
պետը կ'ըսէ . “ Վ ասն զի սովոր էին մար-  
” գիկ ուրախ լինել ՚ի մեհեանս կուոցն զո-  
” հիւքն՝ զոր անմոնչոցն մատուցանեին :

”Վասն այնորիկ և դու կոչեցեր ’ի զենումն  
 ”որդւոյքո զտիեղերս և ասացեր , զպարա-  
 ”րակ իմ զենեալէ , և զՃաշիմ պատրաս-  
 ”տեալէ , և բազմացուցեր զուրախութիւն  
 ”’ի խաչելոյ որդւոյքոյ , և յագեցուցեր  
 ”զամենայն տիեղերս ’ի կենդանարար մարմ  
 ”նոյ . որ էն կերակուր և կենդանութիւն  
 ”բաւականի ամենայն երկրպագուաց քոց  
 ”ընդ ամենայն տիեղերս ” (Աժակ . Իշլ .  
 69 . 70) :

Կռապաշտները զոհ կ'ընէին՝ կ'ըսէ նը  
 հայրապետը . և այնպէս էր սովորութիւնին՝  
 որ ըրած զոհերնուն միսէն կ'ուտէին : Տէրն  
 մեր Քրիստոս աշխարհքի մեղքը քաւելու  
 համար անանկ զոհ մը եղաւ՝ որ ասոր պէս  
 կատարեալ զոհ չէր կրնար ըլլաւ . քանզի  
 ինչպէս որ սուրբ առաքեալը կ'ըսէ՝ “ Քն  
 ”միանգամ մատուցեալ պատարագ առ ’ի  
 ”բառնալոյ զմեղս բազմաց ” . և մեղաց  
 թողութիւն ըլլալէն ետքը՝ ուրիշ պատա-  
 րագի կամ զոհի կարօտութիւն չի մնար .  
 “ Ուր թողութիւն է , ոչ ևս պիտոյ է վասն  
 ”մեղաց պատարագ ” (Աժք . Ծ . 28 : Ժ . 18) :  
 Եւ որովհետեւ հեթանոսները իրենց ը-  
 րած զոհին միսէն կ'ուտէին . տէրն մեր Քն  
 ալ իրեն մարմինը տուաւ հաւատացելոց  
 որ ուտեն . յագեցոյեր լոփեղէր ” ՚ի կենդանա-  
 րար ճարմնոյ : Ոմէ որ նը հայրապետը ճարմին ը-  
 սելով մարմնոյ նմանութիւն հասկընար . կամ  
 յագեցոյեր բառը ուրիշ նշանակութիւնով

մը առած ըլլար, նմանութիւր յարմար չէր ըւլար. այլ ասանկ անձոռնի միտք մը կ'ելլէր. ինչպէս որ հեթանոսները զոհին բուն մահն կ'ուտէին, անանկ ալքրիստոնեայք մեղացքաւութեան համար զոհ եղող Քրիստոսին մարմնոյն օրինակը կ'ուտեն:

Քրիստոսի արեան համար ալ սուրբ կուսաւորչին հաւատքը նոյնն է. խսկական արեան ճաշակումն կը ճանչնայ. այն արեանը՝ որ խաչին վրայ թափեց Տէրն մեր աշխարհի փրկութեր համար: “Եւ քան զի ուտէին և ըմպէին մարդիկ զարիւն զոհից անասնոց դիցապաշտութեան, վնասայրիկ եհեղ զարիւնն իւր ՚ի վերայ փայտին. զի փայտն ընդ դրօշեալ փայտիցն, և ինքն ընդ մարդադէմպատկերացն սլըշ ծութեան, և արիւնն իւր ընդ նուագացն ուրախութեան արեանցն, որով և նորոգումն մարմնոց դալարութե մարդկան. զի եկն գնեաց զմեղ արեամբն իւրով ՚ի ստրկութիւն ծառայութեան աստուած ծութենէ չարութեան մեղացն. զի մեք եմք գին արեան որդւոյ քո. փրկեալք և ազատեալք արեամբ և մարմնով նորա” (անդ. թղթ. 70. 71): Ինչ համեմատութիւրաւ սուրբ հայրապետը՝ զոհից մսերուն և Քրիստոսի մարմնոյն հետ՝ ճաշակման կողմանէ, նոյնը ըրաւ և զոհերուն արեանն ու Քրիստոսի արեանը հետ, ու պելըւ և ըն-

պելւ կողմանէ : Եւ չենք կը ընար խնդիր յարուցանելթէ ինչու միայն հաթանաաց համար՝ զոհից արիւնը կ'ուտէին և կը խըմին կ'ըսէ , և մեզի համար չըսէր թէ՝ Քսի արիւնը կը ճաշակեմք : Քանզինախ՝ բաղդատութիւնը ինքնին կը ցըցընէ թէ՝ ինչպէս որ հեթանոսները իրենց զոհին արիւնը կը ճաշակէին , նմանապէս մենք ալ՝ մեզի համար պատարագվող Քրիստոսի արիւնը կը ճաշակեմք : Եւ երկրորդ՝ մարմինն ալ ասոր նման բաղդատութեան տակ ծգելով՝ գործածութե կողմանէ երկուքն ալ նման ըլլալնուն համար՝ մի և նոյն բանը երկուքին վրայ ալ կրկնելլ հարկ չի սեպեց . բաղդատութեան միայն մէկ ծայրը դնելլ բաւական սեպեց , որ մէկալ ծայրն ալ կը հասկըցի :

Առաջ լուսաւորիչ հայրապետը իրեն հաւատքը միայն այս չարչարանքիո ատենը առ Ատոտած դաւանելլ հերիք չի սեպեց . իրեն միջնորդութեամբը հաւատոյ լուսով լուսաւորվելու ժողովրդեանն ալ քարոզելլ հարկ սեպեց . ուստի իրեն քարոզութիւններուն մէջ կ'ըսէ : « Աբք ՚ի Քս մկրտեցան ճշմարիտ հաւատով և ոււրբ սիրով՝ հաղորդին մարմնոյ և արեան փրկչին՝ որ գրաւական է փառաց յուսոյ յարութեն : Քստ բանին տեառն թէ՝ բանիցո անգամ եթէ ուտիցէք ՚ի մարմնոյ իմմէ և ըմպիւցէք յարենէ իմմէ , դիմատու մահուան

” իմց պատմեսջիք մինչեւ ՚ի դարձ դալըս-  
” տեան իմց յերկիք ” (Յաճախաղապուտ ,  
Ճառ , Ժդ . Եղբակա . 185 . դայ . Կոստ . 1824) :

Այս խօսքիո մէջ նկատելու արժանի  
երկու բան կայ : Ո՞է կը այն՝ որ փրկչին մարմ-  
նոյ և արեանը՝ Գրաւական կենաց յուսոյ յարու-  
թան կ'ըսէ . և ասիկայ՝ Յովհաննու աւե-  
տարանին խօսքէն առնըլված է , “ Ար ուտէ  
” զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ , ունի  
” զիւանս յաւիտենականս . և ես յարու-  
” ցից վնայաւուրն յետնում ” (Յովհ . դ . 55) .  
անանկ է նէ՝ սուրբ Առևաւորիչն ալ Յովհ  
հաննու վեցերորդ գլուխը նըկարագրա-  
կան մտօք կը հասկընար . այլաբաննութիւն  
չէր տեսներ այն խօսքերուն մէջ : Եւ որ  
տեղ և որ հայրապետ՝ որ հաղորդութեան  
խորհրդոյն կենարար անուն կուտայ նէ՝ նոյն  
Յովհաննու աւետարանին խօսքը կը նա-  
յի՝ որ Քրիստոս ըստու . “ Հաց Առատու-  
” ծոյ է որ իջանէ յերկնից , և կեանս տայ  
” աշխարհի ” (անդ , 33) . ըսել է որ՝ այն  
ալ Յովհաննու վեցերորդ գլխոյն մէջ այ-  
լաբաննութիւն չի տեսներ . նկարագրական  
մտօք կը հասկընայ : Նկատելու արժանի  
երկրորդ բանն է՝ որ տեառն մերոյ խօսքն  
է ըսելով այնպէս մէկ բան մը կը բերէ՝ որ  
Քրիստոս անանկ խօսք չէ ըսած . առաքե-  
լոյն թղթոցը մէջը ասոր նման բան մը կայ ,  
բայց ամէն կերպով յար և նմանը չէ , բառ-  
փոխված է : Առաքեալը կ'ըսէ . “ Քանիցս

„անգամ թէ ուտիցէք զհացս զայս և զբա-  
 „ժակս ըմպիցէք, զմահն տեառն պատմե-  
 „ցէք մինչեւ եկեսցէ նա” (Ա. Կրտն. Ժա .  
 26): | ուսաւորիչը Քրիստոսի ըսել կու-  
 տայ. “Քանիցս անգամ եթէ ուտիցէք ’ի  
 „մարմնոյ իմմէ և ըմպիցէք յարենէ իմմէ,  
 „զյիշատակ մահուան իմոյ պատմեսջիք մին-  
 „չեւ ’ի դարձ գալստեան իմոյ յերկիր” :  
 Քայց սուրբ գրոց և | ուսաւորչին խօսքին  
 մէջ տարբերութիւն բնաւ չկենալէն զատ՝  
 ամէն կերպով միաբան է . անանկ որ՝ Քր-  
 իստոսի ըսած խօսքին մեկնութիւնը ին-  
 քը չի տար, առաքելցն տալ կուտայ : Քր-  
 իստոս սուրբ խորհուրդը սահմանած ժա-  
 մանակը իր մարմինն ու արիւնը առաքեալ-  
 ներուն տալով ըսաւ . “Օ այս արասջիք առ  
 ” իմոյ յիշատակի” : Պօղոս առաքեալը այս  
 սահմանադրութիւնս պատմելով՝ հացն ու-  
 բաժակը ինչ ըլլալը հասկրցընելէն ետքը  
 Քրիստոսի այս վերջին խօսքը կը մեկնէ վե-  
 րոյիշեալ խօսքովը . Քրիստոսի ըսած պայ-  
 քառը առե՞ս կերպ’յս և արբե՞ս բառերուն տեղը  
 հասկրնալով . և ասով բնական իմաստը ե-  
 րեւան կ’ելլէ . պայս արտաշիք ըսելը՝ առե՞ս կե-  
 րպ’յս, այս է մարմին իմ . արբե՞ս ի ամանէ ամենե-  
 տեան, պէ այս է արիւն իմ ըսել կ’ըլլայ . և աս-  
 կէց կ’ելլէ | ուսաւորչին խօսքը, “Քանիցս  
 ” անգամ թէ ուտիցէք ’ի մարմնոյ իմմէ և  
 ” ըմպիցէք յարենէ իմմէ” : Քրիստոսի առ-  
 իմոյ յիշատակի ըսածին միտքն այ առաքեալը

կը հասկցցնէ , որ այս հացըս իմ մարմնոյս  
 յիշատակ՝ և բաժակը իմ արեանս յիշատակ  
 ըրէք ըսել չէ եղեր . ինչպէս որ աւետա-  
 րանին միտքը մենք շիտակ կը հասկընամք  
 ըսելով պարծենցողները կը կարծեն , և ա-  
 սանկ կարծելով առաքելոյն մըտքէն կը հե-  
 ռանան : Առաքելոյն բացատրածը այն է՝ որ  
 այն հացը և այն բաժակը՝ որ Քրիստոսի  
 մարմին և արիւն եղաւ , քանի որ ուտէք և  
 խմէք նէ՝ իմ աշխարհի փրկութե՛ համար  
 մեռնելոս պատմեցէք . “ Օ մահ տեառն  
 պատմեցէք ” : Եւ ասկէց կ'ելք Քրիստոսի  
 առ իմոյ յէշատակի ըսածին ալ բացատրուիր ,  
 ինչպէս որ սուրբ | ուսսաւորիչը կ'ըսէ “ ըզ  
 ” յիշատակ մահուան իմոյ պատմեսջիք մին-  
 ” չեւ ’ի դարձ գալստեան իմոյ յերկիր ” :  
 Այս վերջին յաւելուածս՝ որ առաքեալը  
 համառօտ խօսքով մինչեւ եկեղէն առ ըսելով  
 կը լըմնցընէ , և | ուսսաւորիչը քիչ մը ըն-  
 դարձակ կ'ընէ , Քրիստոս բնաւ ըրսաւ .  
 բայց առանց ժամանակ մը որոշելու արաւ-  
 ջէ ըսելէն ասանկ կը հասկընայ թէ՛ սուրբ  
 առաքեալը և թէ՛ ընդհանուր եկեղեցին ,  
 որուն մտացը թարգման է այս տեղ սուրբ  
 | ուսսաւորիչը : Եւ այս խօսքովս նորադանդ-  
 ներուն բերանն ալ կը գոցէ , որ անդա-  
 դար կը կնաբանելով կ'ըսեն . թէ որ առա-  
 քեալը այն հացն ու գինին Քրիստոսի մար-  
 մին և արիւն կը ճանչնար նէ՝ ինչու համար  
 հայ և գինի ըսաւ : Բայց որովհետեւ առա-

քեալը լոկ պարզապէս հաց և գինի չըսաւ ,  
այլդիմորտշով և դերանունով յատկացոց .  
շնոցս զայս . զբաժակ , ըսելով . որով յայտնի  
կը ցըցընէր թէ հասարակ հաց և բաժակ  
չէ . այլ վերը պատմածն է , որուն համար  
ըսեր էր թէ Քրիստոս ձեռքը առնելով և  
գոհանալով՝ մէկուն համար “Այս է մար  
”մին իմ” , և մէկալին համար “Այս է ա  
”րիւն իմ” ըսաւ : Արով հաց ըսածը մար  
մին՝ և գինի ըսածը արիւն են : Առորբ լու  
սաւորիչն ալ ասանկ հասկընալով՝ արտա  
քին երեւոյթներուն անունին տեղը բուն  
էութեանը անունը դրաւ :

Այս պատարագո՞ւ՝ կամ Քրիստոսի մար  
մինէն ուտել և արիւնէն խմելը՝ մինչեւ աշ  
խարհքիս վերջը պիտի ըլլայ ամէն օր : Քնի  
արանջիւն ըսելէն Պօղոս առաքեալը ասանկ  
մակաբերեց որ՝ Քրիստոսի պատուիրածը  
կատարելով Քրիստոսի մահը պիտի յի  
շեմք “մինչեւ եկեսցէ նա” : Ասոր համար  
ընդհանուրքրիստոնեայք մինչեւ աշխարհ  
քիս վերջը ամէն ժամանակ դՔրիստոս կը<sup>1</sup>  
պատարագեն և պիտի պատարագեն :

1 Սեբերիանոս Գաբրազու Եպիսկոպոսն ալ՝ Քրիստո  
սի խօսքը առաքելոյն խօսքովը կը մէկնէ սուրբ Լուսա  
ւորչին պէս . “ Քրիստոսի պատարագ հանստրաղ մատչի :  
” Վասն որոյ և կենարարին յայտ արաբեալ , թէ խորհուր  
” դըն չծառայէ ժամանակաց և աւուրց , կամ ամսոց և  
” տարեաց . ասէ յաշակերտն . քանիցս անգամ և ուտի  
” ցէք զհացո զայս , և ըմալիցէք զբաժակս զայս , զիմ մահ  
” պատմեսն Պիք ” ( Ճառակ Ալբէլը . Ճառակ . է : Բդլ . 186 . դա .  
հյ . լու . Վենետիք . 1827 ) :

‘Արաղանդները ասոր գեմ կենալով՝  
 Պօղոս առաքեալն ալիրենց կուսակից բըռ-  
 նել կ'ուզեն . բայց թէ որ իրենց վկայու-  
 թիւն բերած խօսքը իրենց միտքը հաստա-  
 տէ նէ՝ հարկ կ'ըլայ ըսել որ սուրբ առա-  
 քեալն ալ հակասութեան մէջ է ինկեր .  
 մէկ տեղ ըսածը ուրիշ անգամ ըսածովը  
 աւրեր է , և զինքը իբրեւ քարոզիչ բըռ-  
 նելով խօսքը մշտիկ ընողներուն մէջ իրա-  
 րու հակառակ վարդապետութիւն սեր-  
 մանելով՝ քրիստոնէից միութիւնը երկու-  
 քի բամնել ուզեր է . կորնթացիներուն  
 ապսպըրելով՝ որ մինչեւ Քրիստոսի միւ-  
 սանգամ գալուստը Քրիստոսի մարմինը  
 ուտեն և արիւնը խըմեն . որ առանց պա-  
 տարագիւ և առանց փոխարկութեան ըըլլար  
 և երայեցիներուն ապսպըրելով՝ որ մէկ  
 մըն ալ պատարագ ըընեն . քանզի Քրիս-  
 տոս պատարագեցաւ և մեղաց թողութի-  
 տուաւ . և անկէց ետքը պատարագը ո-  
 չինչ է (Եֆ. թ . ժ) :

Բայց Պօղոս առաքեալը՝ թող այն որ  
 չոգւով սրբով կը խօսէր , մարդկային ի-  
 մաստութեամբ ալ վարժըլած էր . և այդ-  
 պէս հակասութեան մէջ չէր իյնար . և  
 երայեցիներուն գըրած նամակին միտքն  
 ալ նորաղանդներուն մտքէն շատ հեռաւ-  
 է : Առաքեալը Քրիստոս հրէից զոհերուն  
 հետ բաղդատելով՝ հրէական օրէնքին զո-  
 հերուն բաղմութենէն անոնց անպիտան

ըլլալը՝ և մեղաց թողութեան վրայօք օ-  
գուտ չունենալնին կը հասկլցընէ . Քրիս-  
տոս պատարագելէն ետքը պատարագնե-  
րը խափանելէն ալ կը հետեւցընէ՝ որ մե-  
ղաց թողութեան համար Քրիստոսէն ետ-  
քը ուրիշ պատարագ պէտք չէ . որովհե-  
տեւ պատարագաւ մեղաց թողութիւն  
կ'ուղէինք նէ՝ ահա անիկայ Քրիստոսվ  
եղաւ : Ի՞այց ասկէց չի հետեւցըներ որ՝  
մեղաց թողութիւն գտնելէն ետքը Քր-  
իստոսի կարօտ չեմք, այլ մանաւանդ ա-  
սոր հակառակը յայտնի կը խօսի . Քահա-  
նայապետին երկու պաշտօն կը նշանակէ .  
մէկը՝ հանապաղ իր պաշտօնին վրայ կե-  
նալ . և երկրորդ՝ մեղքերը ջնջելու կարող  
ըլլալու կողմէն իրարու նման պատարագ-  
ներ ընել : « Ամենայն քահանայապետ կայ  
» հանապաղորդ ՚ի պաշտաման . և զնոյն  
» պատարագս մատուցանէ բազում ան-  
» գամ որք ո՛չ երբէք կարող են բառնալըդ-  
» մեղս » (Եֆք. ժ. 11) : Այս երկու պաշ-  
տօններուն մէկը Քրիստոս մինչեւ հի-  
մա կ'ընէ . և մէկը մէկ անգամ մը միայն  
ըրաւ . « Իսկ սա զմին վասն մեղաց մատոյց  
» պատարագ , և մշտնջենաւոր նստաւ  
» ընդ աջմէ Աստուծոյ » (անդ 12) : Եորէն  
պատարագելու բան մը չունի . քանզի մի  
և նոյն պատարագը բաւական է մինչեւ  
յաւիտեան իր գործը կատարելու . « Քան-  
» զի միով պատարագաւ կատարեաց զորք

” բեալսն ՚ի մշտնջենաւորս ” ( անդ . 14 ). Քնի եկեղեցին ալ ուրիշ պատարագ չունի . հրեայները գառն մը կը զոհէին , միւս տարին մէկ ուրիշ գառն մըն ալ կը զոհէին . հասկրցընելով որ անցած տարվան գառնը բաւական չէ եղեր . և այսպէս ամէն տարի զատ զատ գառն զոհելով՝ ամէնուն ալ անբաւական ըլլալը կը խոստովանէին : Ո՞ւր ամէն օր պատարագածը մի և նոյն Քրիստոս է . քանզի կատարելապէս գիտեմք որ մեր ամենեցուն փրկութելը բաւական է անիկայ . և ամէն օր կը պատարագեմք նէ՝ իրեն պատուէրը կը կատարեմք , որ ըսաւ . “ Օ այս արասջիք առ իմոյ յիշատակի ” . և ինչպէս որ հեթանոսները իրենց զոհերուն մարմինէն կը հաղորդէին , մենք ալ Քրիստոսի մարմինէն կը հաղորդիմք , որ է մեր ճշմարիտ զոհը և պատարագը . ինչպէս որ ըսաւ սուրբ | ուսաւորիչը աղօթքին մէջ :

## 11. ԱԳԱԹԱՆԴԵՂՈՍ

Ասոր համար միայն այսքան գիտեմք որ հռովմայեցի էր ազգաւ . և Տրդատայ հետ Հռոմէն Հայաստան եկաւ , և անոր գիւղադրախրը ըլլալով՝ անոր հրամանաւը Հայոց ազգին լուսաւորութեան պատմութիւնը գրեց : Ուրբ | ուսաւորչին քարոզութեամբը հաւատքը սորված ըլլալով՝ ասոր վկայութին ալ սուրբ | ուսաւորչին

վարդապետութե միտքը կը հաստատէ :  
 Այս պատմիչըս սուրբ Առաստղին  
 Տարոնց Երկիրը որ Կարապետի անուամբ  
 տաճար շինելը պատմելով՝ կ'ըսէ , « Կանգ-  
 նեաց սեղան ՚ի վկայարան որբոցն հան-  
 գըստին՝ զոր շինեացն . և մատուցանէր  
 « զպատարագն փրկութե , և բաշխէր անդ  
 « զմարմին և զարիւն կենարարին Քնի »  
 (Աժալ . Բղլ . 607) : Հին սովորութիւն Եր՝  
 որ որբոց մարմինները ուր թաղէիննէ՝ սե-  
 ղանը անոր վրայ կը շինամէր . և պատարագը  
 հօն կ'ըլլար . և որովհետեւ սուրբ . Առ-  
 սաւորիչը Կեսարիայէն սրբոցն Յավհաննու  
 կարապետի ոսկորներէն կրտօրվանք , և որ  
 Աթանագինէ հայրապետին մարմինը հետ-  
 քերաւ , սեղանը անոնք թաղած տեղին վր-  
 րայ շինեց : Այս սովորութիւն հին ատենք  
 այնքան հաստատուն Եր՝ որ սբց մասունք  
 չեղած տեղը սեղան չէին շիներ . ինչպէս  
 որ սրբոցն Ամբրոսիոսի վարուց պատմու-  
 թենէն գիտեմք . և ասոր վրայ ընդարձակ  
 խօսված է Յայտարար ու լլութեան գլորին Երկ-  
 րորդ հատորին մէջ : Այս սեղանիս վրայ  
 եղած պատարագը Քրիստութեան պատարագ ,  
 և այն տեղ բաժներվածը կենարարին Քնի  
 մարմինն և արիւն Եր կ'ըսէ Ագաթանգեղոս ,  
 ինչպէս որ որ Առաստղին սորված էր :

Դարձեալ նոյն Ագաթանգեղոս՝ թա-  
 գաւորին և բոլոր նախարարաց մկրտու-  
 թիւնը պատմելէն Ետքը կ'ըսէ . « Ելեալք

„ ՚ի տէրունական տունն դառնային : Եւ  
 „ անդ մատուցանէր զօրհնութեան պատա-  
 „ րագն . հազորդէր զամենեսեան ՚ի խոր-  
 „ հուրդն սրբութե . բաշխէր ամենեցուն  
 „ զնը մարմինն և զպատուական արիւնն ա-  
 „ մենափրկչին Քրիստոսի զկենդանարարն և  
 „ զկեցուցիչ ամենայն մարդկան , և զարա-  
 „ րիչն և զաշխարհագործն ամենայն աշ-  
 „ խարհի , զաստուածատուր շնորհն առ ա-  
 „ մենեսեան „ ( անդ . 619 ) : Կը տեսնե՞ս ,  
 Քրիստոսի մարմնոյ և արեանը ի՞նչ անուն-  
 ներ կուտայ . կենդանարար և կեցրդիլ ամենայն  
 հարդիան կ'ըսէ . քանզի այնպէս սորված էր  
 սուրբ աւետարանէն . “ Հաց յէստուծոյ  
 „ է որ իջանէ յերկնից՝ և կեանս տայ աշ-  
 „ խարհի : Հացն զոր ես տաց՝ մարմին իմ  
 „ է , զոր ես տաց վասն կենաց աշխարհի ”  
 ( Յով . զ . 33 . 52 ) : Եցն մարմինը և ա-  
 րիւնը՝ արարիլ և արարչագործ ամենայն աշխարհի  
 կ'ըսէ . որպէս զի՝ երբոր երկրագութիւն  
 ընելիս տեսնես նէ՝ չի գայթակղիս : Քան-  
 զի Քրիստոսի աստուծոյ մերոյ մարմինն է .  
 և Քրիստոս՝ համագոյակից Հօր Ճշմարիտ  
 Աստուած էր . քանզի “ Ամենայն ինչ նովաւ-  
 եղեւ ” ( Յով . ան . 3 . ) և մարմնոյն հետ միա-  
 ւորեալ ըլլալով անշփոթելի անձնական  
 միաւորութեամբ՝ չեմք կը բնար Քրիստոս  
 մարդկային ընութեք մէկ որոշեալ անձն մը  
 ընել և աստուածային անձնէն զատելով  
 երկու անձն դնել : Ուստի թէպէտ Քոի

մարմինը աստուած չեմք կրնար ըսել, բայց  
 Քրիստոսի Աստուած կ'ըսեմք, որ Քրիս-  
 տոս՝ միաւորութենէն կամ աստուածային  
 և մարդկային բնութեանց միութեամբը  
 մի անձն ըլլալէն առնըլված անուն է : Գի-  
 տեմ որ ասիկայ չես ընդունիր . քանզի ոք  
 Խարիսմկցին Աստուածածին ըսելը չես  
 ընդունիր, որ այս գաւանութեանը հե-  
 տեւութիւնն է . ուստի ես այս տեղս Պօ-  
 ղոս առաքելոյն մէկ քանի խօսքը նշանա-  
 կեմ . և կը յուսամ՝ որ ասոնք քննելով,  
 Քրիստոսի տեառն մերոց հրեայներուն հետ  
 խօսած ատենը “Յառաջքան զլինելն Աք-  
 ուրահամու եմ ես” ըսելն ալ արդարացը  
 նես (Յով. ը. 58) . և կենարար մարմնոյ  
 և արեանն ալ ինչ մոքով միայն Աստուծոյ  
 վայելելու ածականները տրվիլը հասկընաս :  
 Պօղոս առաքեալ հոռվմայեցւոց թղթին  
 սկիզբը կ'ըսէ . “Յառաջ խոստացաւ ’ի  
 ”ձեռն մարդարէից իւրոց գրովք սրբովք,  
 ”վասն Որդւոյ իւրոց եղելոյ ’ի զաւակէ  
 ”Դաւթի ըստ մարմնոյ . սահմանելոյ Որդ-  
 ”ւոյն աստուծոյ զօրութեամբ ըստ հոգ-  
 ”ւոյն սրբութեան, ’ի յարութենէ մեռե-  
 ”լոց, Յիսուսի Քրիստոսի տեառն մերոց”  
 (Յով. ա. 2. 3. 4) : Առաջ մէկ մը Որդէ  
 ասպուծոյ կ'ըսէ . և ’ի լուսիկէ Դաւթի ըլլալը  
 յիշելէն ետքը՝ սահմանեալ Որդի ասպուծոյ կ'ը-  
 սէ . և չեմք կրնար ըսել թէ Պօղոս առա-  
 քեալը երկու հատ որդի աստուծոյ կը

Ճանչնար . մեկը բուն՝ և մեկալը սահմանված  
 որդի աստուծոյ : Աւրիշտեղի՛ ըսէ . “ Խընդ ~  
 ” ըէի ես ինքնին նզով լինել ’ի . Քրիստոսէ  
 ” վասն եղբարց և ազգականաց իմոց ըստ  
 ” մարմնոյ . որ են խրայէլացիք . . . որոց  
 ” հարքն . յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ .  
 ” որ է ’ի վերայ ամենեցուն Աստուած օրհ ~  
 ” նեալ յաւիտեանս ” ( Հռովմ . թ . 3 . 5 ) :  
 Քերականութեան կանոնով յայտնի է՝ թէ  
 ” յարաբերականը կամ ճարմին բառը պիտի  
 յարաբերէ , որ չի կրնար ըլլալ . կամ Քը-  
 րիստոս բառը . և յարաբերեալը յարաբերա-  
 կանին տեղը դնելով կ'ըլլայ՝ Քրիստոս է՝  
 Աստուած . ուրեմն և Քրիստոսածինն է՝  
 Աստուածածին . ուրեմն մարմնացեալ Որ-  
 դին աստուծոյ՝ ( որ է Քո բառին նշանա-  
 կութիւնը , ) է՝ Աստուած . ուրեմն՝ Քրիս-  
 տոս է արարիւ և աշխարհագործ ամենայն աշխարհի :  
 Քանզի ասանկ չըլլայ նէ՝ աստուած չըլլար .  
 կամ երկու կերպ աստուած եղած կ'ըլլայ .  
 մեկը արարիւ և աշխարհագործ . և մեկալը այս  
 յատկութիւններէս զուրկի : Ագաթանգե-  
 ղոսի խօսքին աւելի մօտ կուգայ առաքե-  
 լոյն սա խօսքը . “ Փոխեաց զմեղ յարքայ ~  
 ” ութիւն որդւոյն իւրոյ սիրելոյ . որով  
 ” ունիմք զիրկութիւն արեամբն նորա , և  
 ” զթողութիւն մեղաց մարմնովն նորա . որ  
 ” է պատկեր աներեւութիւն Աստուծոյ .  
 ” անդրանիկ ամենայն արարածոց . զի նովա-  
 հաստատեցաւ ամենայն , որ ինչ յերկինս և որ

„ինչ յերկրի . որ երեւին՝ և որ ոչն երեւ  
 լին . եթէ աթոռք, եթէ տէրութիւնք,  
 եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւք .  
 ամենայն ինչ նովաստ և ’ի նոյն հասպատեցաս . և  
 նա է յառաջ քան զամենայն, և ամենայն  
 ինչ նովաստ եկաց բովանդակ . և նա է գլուխ  
 մարմնոյ եկեղեցւոյ . որ է սկիզբն, անդ  
 րանիկ ’ի մեռելոց ” (Կողմ . ա . 13—18) :  
 Այս խօսքս Ագաթանգեղոսի ըսածին շատ  
 մօտ կուգայ ըսի . և յիրաւի պարագ տեղ  
 չէ առաքելոյն զատ զատ յիշելը Քրիստոսի  
 փրկարար մարմինը և մեղսաքաւիչ արիւնը .  
 յիշեցընել կ’ուղէր հաղորդութեան խոր  
 հուրդը . չէ նէ ասոնք զատ զատ յիշել  
 պէտք չէր : Ագաթանգեղոս ալ այս սուրբ  
 խորհուրդը կը յիշէ . և աշխարհագործ և  
 արարիչ կ’ըսէ նոյն մարմնոյն և արեանը .  
 չէ թէ ինքնին, այլ Բանին աստուծոյ հետ  
 միաւորութեանը համար . ինչպէս որ առա  
 քեան ալ նոյնը ըսաւ . ինչպէս որ սուրբ  
 հաղորդութիւնը Քրիստոսի ճշմարիտ մար  
 մին և արիւն հաւատացողները ամենն ալ  
 պիտի ըսեն :

## 12. ՍՈՒՐԲԻ ԴԵՏՈՆԴԻՈՍ

Քրիստոսի 301 կամ 302 թուին՝ այս նք  
 հայրապետս կապադովկացւոց կեսարիա  
 քաղաքին եպիսկոպոսն էր՝ որ նք լուսա  
 ւորիչ նոյն թուականին կեսարիա գնաց և  
 digitised by A.R.A.R.@

անկեց ձեռնադրութիւն առաւ : 314 և  
 315 թուին ալ նոյն ամուռը կը հովուէր ,  
 և Անկիւրիոյ և Նէոկեսարիոյ ժողովքները  
 գրտնըլեցաւ : 325 թուին ալ Աիկիոյ ժո-  
 ղովքին Հայրապետացը մէջ անունը կը կար-  
 դացվի . ըսել է որ՝ այն ժողովքին Հայրա-  
 պետներուն մէկն էր : Առաջ Դրիգոր աս-  
 տուածաբանին Հայրը քրիստոնէական Հա-  
 ւատքի կըթողը ասիկայ էր : Փիլոստորդիոս  
 արիոսական պատմիչը՝ այս սուրբ Հայրա-  
 պետիս Համար կ'ըսէ որ Աիկիոյ ժողովքին  
 մէջ Արիոսի պաշտպան կեցաւ . և այս զբր-  
 պարտութիւն ունէր սուրբ Հայրապետս իր  
 ժամանակակիցներուն մէջ : Օքապարտուի-  
 լլալը անկեց յայտնի է՝ որ սուրբն Աթա-  
 նաս , որ Արիոսականներուն դէմ ուղղա-  
 փառ Հաւատոց պաշտպան էր , և ժողով-  
 քին մէջն ալ գտնըլեցաւ սարկաւագութե-  
 ատենը՝ Աղեքսանդրոս Հայրապետին հետ ,  
 որով ՚ի Հարկէ կը գիտնար թէ այն ժողով-  
 քին մէջ Արիոսի պաշտպան ով կեցաւ .  
 սուրբ Դեւոնդիոսին Համար “Առաքելա-  
 կան այր՝ անկատկածելի ՚ի Հաւատս ո կ'ը-  
 սէ (Ճառ . ա . ընդունէմ արիանոսաց ) . և սբն  
 Դրիգոր աստուածաբան՝ մէծն Դեւոն-  
 դիոս անունով կը պատուէ : Ե՛րբ մէու-  
 նիլը չփախցրվիր :

Առաջ Առասաւորիչ ձեռնադրըլելն  
 ետքը երբ որ Կեսարիայէն Հայաստան կը

գառնայր , սուրբն Կեւոնդիսս յատուկ  
գիր մը կը խըրքէ Հայոց ազգին . քրիստո  
սական հաւատքի դառնալնին շնորհաւո  
րելով . և նամակին վերջերը կ'ըսէ . “ Եւ  
” հաստատեալ կայցէ վկայութիւն ՚ի մէջ  
” երկուց կողմանցու . զի պարգեւաբաշխու  
” թիւն նորոգեալ քահանայապետութեղ  
” ձերոյդ նահանգիդ , առ ՚ի մէնջ կայցէ  
” անշարժ յեկեղեցւոջս կեսարու . ուստի  
” և հանդերձեցաւ ձեղ պատրաստութի  
” շինութեան ձեռնադրութիւն : Որովա  
” նապական պարգեւք ձեղ բաշխին վկա  
” յացեալ աջովդ շնորհօք նորոգութեան  
” մկրտութեան , և փրկական խաչին , և  
” կենդանարար մարմնոյն և քաւիչ արեանն  
” Քրիստոսի ” ( Աֆանանդէ . Իլլ . 613 · 614 ) :  
Այս խօսքերովս սուրբ հայրապետը ձեռ  
նադրելոյն սեպհական գործ կ'ընէ Քնի  
կենդանարար մարմնոյն և քաւիչ արեանը  
բաշխելն ալ . և ասոր գործադրութիւն էր  
սուրբ | ուստաւորչին ըրածը՝ որ վերը տե  
սանք :

### 13. ՍՈՒՐԲԻ ՑԱԿՈԲ ՄՃԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Այս սուրբ հայրապետու սուրբ | ուստ  
առչին հօք քրոջը տղան էր . հայրը Աստի  
ազգաւ , ինչպէս որ Աստի պատմիչները  
յայտնի կ'ըսեն : Նիկիոյ ժողովքին հայրա  
պետներուն մէկն էր : Խորենացին կը պատ-

մէ որ՝ 'Նիկիա երթալու ատենը կեսարիա  
հանդիպեցաւ . որ արեւելեան եպիսկոպոս  
ներէն մէկ քանին հոն գտնըվեցան . և այն  
ժամանակին հասան որ Պրիգոր աստուա-  
ծաբանին հայրը կը մկրտըվէր . և մկրտողն  
էր սուրբն Վեւոնդիոս : Երբոր մկրտըվողը  
ջուրէն ելաւ՝ “ | ոյս շուրջ փայլատակեալ  
” զնովաւ , կ'ըսէ Խորենացին . զոր ոչ ոք ’ի  
” բազմութենէն ետես , այլ միայն Վեւոն-  
” դիոս՝ որ մկրտէրն , և մերն Կոստակէս , և  
” Եշթաղ եղեսիայ , և Յակոբ մծբնայ , և  
” Յոհան պարսից եպիսկոպոս . որք նոյն  
” շաւզօք ուղեւորէին ՚ի ժողովն ” (Խորենացի .  
թ . 89) : Հատ հռչակաւոր եղաւ սուրբ  
հայրապետս . թէ՛ հրաշագործութեամբ՝ և  
թէ իմաստութեամբը : Արիոսի սատակու-  
մը՝ ասոր և սրբոյն Աղքաքանդրոսի կոստան-  
դնուալոլսեցւոյն աղօթքովը եղաւ ըսին այն  
ժամանակի մարդիկ . և մեծն կոստանդիա-  
նոս՝ ասոր շատ մեծ յարգութիւն կուտար :  
Պրած վարդապետական ճառերը՝ որ ամէ-  
նը մէկ տեղ ժողվըված՝ մէկ գիրք մը եղած  
են , և երանելոյս մականունով Օգոն կ'ըս-  
վին , կը յիշէ սրբոյն Ներոնիմոսի յաղագս  
երեւելի արանց գրքին շարունակութիւնը  
գրող մարսիլիացի Պեննատիոս քահա-  
նայն , ոք հայրապետիս վախճանելէն 150  
տարիի մը չափ ետքը . և գրքին գլուխնե-  
րուն ցանկն ալ կուտայ , որ պակասաւոր  
է . քանզի հինգ գլուխ բան չկայ մէջը . որ

են ժ. Ժբ. Ժկ. Ժդ. և Ժը. Դլուխները։  
Այս գիրքս լատիներէն թարգմանված՝ և  
ընդարձակ ծանօթութիւնով տրամադ է  
Հռոմ. 1756 թուին. և հայերէնն ալ կաս-  
տանդնուպօլիս տրամադ է 1824 թուին։  
Սուրբ Հայրապետին մահը Քրիստոսի 346  
թուին ատենները պատահած կը կարծըիի։

Այս սուրբ հայրապետս՝ Քրիստոսի ե-  
րեքօրեայ թաղումը հաշուելով՝ որպէս զի  
Յովիսանու ձկան փորը երեք օր երեք գի-  
շեր մնալուն նմանութիւնը ամբողջ բերէ,  
կ'ըսէ. « Արդ եկեր Փրկիչն մեր զզատիկ  
ընդ աշակերտան իւր, ՚ի չորեքտասաննե-  
րորդի գիշերի անդ զգուշութեան . և  
զնշան ճշմարիտ զատկին արար աշակեր-  
տաց իւրոց, յետ ելանելոյ Յուդայի առ  
՚ի նոցանէն, էառ զհացն օրհնեաց, և  
ետ աշակերտաց իւրոց ասելով ցնոսա այս  
է մարմին իմ, առե՛ք կերէ՛ք ամենեքեան  
՚ի դմանէ։ Եւ ՚ի վերայ գինւոյն այսպէս  
օրհնեաց, և ասէ ցնոսա. այս է արիւն  
իմ, նոր կտակարանք . որ փոխանակ բազ-  
մաց հեղու ՚ի թողութիւն մեղաց։ Այն-  
պէս եղիջիք առնել զյիշատակ իմ, յոր-  
ժամ ժողովիցիք դուք։ Քանզի ոչ է կա-  
լեալ տէր մեր ՚ի տեղւոջէ անտի, ուր  
արար զզատիկն, և ետ զմարմին իւր յու-  
տել և զարիւնն յըմպել . և չոդաւ ընդ  
աշակերտան իւր ՚ի տեղին, ուր կալան  
զնա։ Արդ յորմէ հետէ կերաւ մարմին

„ նորա և արբաւ արիւն նորա , համարե՞  
 „ ցաւ նա ընդ մեռեալս : Քանզի ՚ի ձեռն  
 „ անձին իւրոյ ետ տէր մեր զմարմին իւր  
 „ ՚ի կերակուր : Եւ քանզի ոչ էր խաչեալ՝  
 „ ետ զարիւն իւր յըմպել : Եւ կալան զնա  
 „ ՚ի գիշերի անդ չորեքտասաներորդի . . .  
 „ համարելով յայնմհետէ՝ յորժամ ետ ըդ  
 „ մարմին իւր յուտել և զարիւնն յըմպել՝  
 „ լինին երեք տիւք և երեք գիշերք” (Օգոն,  
 Ճառ . Ժդ . Առաջլ . 256 . 258 . Պալ . Կոստանդն : )

Ասոր վրայ երկար խորհրդածութիւն  
 չուզեր . Քրիստոսի երեք օր երեք գիշեր  
 թաղված մնալը լրման բերելու համար ա-  
 ւագ հինգշաբթի իրիկվընէն կը համրէ՝ որ  
 հացը իրեն մարմին և գինին իրեն արիւն  
 ընելով առաքեալներուն տուաւ որ ուտեն  
 և խըմեն . և ասով անոնց փորը թաղվե-  
 ցաւ . ով , նոյն ինքն Քրիստոս . անոր օ-  
 րինակը չէ . քանզի օրինակին թաղումը օ-  
 րինակեալին հաշուին չի սեպիլիր : Եւ երեք  
 օրը՝ Քրիստոսի յարութեամբը լրմնալով՝  
 ՚ի հարկէ առաքեալներուն կերածը և խը-  
 մածը նոյն Քրիստոս է՝ որ յարութիւն ա-  
 ռաւ . ըսել է՝ որ նոյն Քրիստոս է որ խա-  
 չը ելաւ . քանզի յարութիւն առնողը խաչ  
 ելողն էր :

Առերք հայրապետիս տուած մեկնու-  
 թիւնը՝ որով՝ Քրիստոսի թաղված մնալուն  
 երեք օրը կը հաշուէ , ետքի մեկնիչները  
 ձգած են : Քայ հաղորդաթեան վրայօք

ունեցած հաւատքը՝ որ այս մեկնութեանս  
հիմնէ, ընդհանուր եկեղեցւոյ հաւատոյն  
համեմատ է. ինչպէս որ մինչեւ հոս տե-  
սանք . և ասկէց ետքն ալ պիտի տեսնեմք :

#### 14. ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

Ասիկայ անմիջապէս սուրբ Յակոբ մըծ-  
բընացիէն ետքը կը դնեմք . մէկ մը՝ որ այս  
սուրբ հայրապետիս աշակերտն է . և երկ-  
րորդ՝ Քրիստոսի թաղման երեք օրը անոր  
պէս կը հաշուէ : Այս երանելիս Ո՞ճբին  
քաղաքը ծնած էր՝ կ'ըսէ Առղոմենոս (Պատմ.  
Եկեւ. գ. 33). Իր նախնեաց աղքատութիւնը  
երանելին ինքը կը պատմէ իրեն խոստովա-  
նութեան գրքին մէջ . բայց անոր կը պար-  
ծի որ իր ցեղին մէջ Քրիստոսի համար ա-  
րիւն թափող նահատակներ կան , և իր հայ-  
րըն ու մայրն ալ դատաւորաց առաջը քր-  
քիստոնէական կրօնքը դաւանեցին : Ինքը  
մէծին կոստանդիանոսի ատենը ծնած է :  
Եկեղեցական կարգաց մէջ սարկաւագու-  
թենէն վեր չելաւ կ'ըսէ Առղոմենոս (Պատմ.  
Եկեւ. գ. 16). բայց քարոզելու իշխանութիւ-  
ալ ունէր Եկեղեցւոյ մէջ . ուստի սուրբ  
Գրիգոր նիւսացին ասոր վրայ ըրած ներ-  
քողին մէջ՝ տիեղերական վարդապետ կ'ը-  
սէ : Ո՞ւռաւ 378 թուին սեպտեմբեր ամ-  
սու մէջ . և սուրբն Հերոնիմոս 392 թուին,  
այսինքն՝ սրբոյս մեռնելին միայն 14 տարի

Ետքը գրելով կ'ըսէ որ քանի մի եկեղեցեաց  
մէջ աստուածաշունչ գիրքը կարդալէն ետ-  
քը ասոր գրուածքներն ալ կը կարդացվէր .  
ըսել է որ՝ այն օրվան կարդացված աստուա-  
ծաշունչ գրքին մեկնութիւնը կը կարդացին  
քարողի պէս . ( Հերոնիմոս . յաղագու Երեւելը  
արանց . Գլ. Ճմ՛ ) : Ասոր վարդապետու-  
թիւնները այսքան յարդի էին եկեղեցւոյ  
մէջ . և այս յարդութենէս կը հասկընամք  
որ՝ հաւատալեաց վրայօք ասոր գրոց մէջը  
գտնըված վարդապետութիւնը՝ այն ատեն-  
վան եկեղեցւոյ վարդապետութիւնն էր :

Այս սուրբ վարդապետոս՝ Առեփարանի  
համաբարբառ Խենութիւն ըսված գրքին մէջ  
կ'ըսէ . “ Եժամէ անտի յորժամ երեկ ըզ  
” մարմին իւր աշակերտացն իւրոց , և ետ  
” զմարմինն իւր առաքելոցն իւրոց , թը-  
” ւեալ լինի նորա երեք աւուրբ , զի՞ ՚ի  
” մեռեալս համարեցաւ նա ” ( Ուստինագրու-  
թիւնս սբոյն Եշիւնայ . Հապոր . Բ . թղթ . 202 ) :  
Հաշիւր սուրբ Յակոբ մըծքընացւոյն ը-  
րած հաշիւին հետ նոյնը ըլլալուն համար՝  
անոր վրայ ըսածնիս ասոր համար ալ բա-  
ւական է : Եւ ասկէց ետքը վկայութիւն  
բերելու հայրապետներնուս խօսքերը մին-  
չեւ հիմա վկայութիւն բերվածներուն  
պէս ըլլալով՝ ամենուն զատ զատ մեկնու-  
թիւն չեմք տար . միայն երբ որ յատուկ  
նշանակելու բան մը ըլլայ նէ՝ անիկայ կը  
նշանակեմք :

Առւրբն Եփրեմ ուրիշ խօսքերովն ալ  
այս խորհրդոյս վրայ ունեցած հաւատոքը  
կը յայտնէ : Առաքելոց մկրտութեր վրայ  
խօսելով՝ կ'ըսէ . «Դարձեալ ասեն, իբրև  
» ետ նոցա զմարմինն իւր՝ եղեւ նոցա մը  
» կը րտութիւն . զի եթէ մկրտէին կամ մը  
» կը րտեալ լինէին, իբրեւ ոչ էին ընդ նու  
» սա հաւատոք մարմնոյ և արեան նորա,  
» զի՞ կանխեաց յառաջագոյն և ասաց նու  
» ցա . եթէ ոչ ուտիցէք ՚ի մարմնոյ նորա  
» և ըմպէք յարենէ նորա՝ չիք ձեղ կեանք:  
» Եւ իբրեւ բարկացան նորա՝ ասէ ցեր-  
» կոտասանսն . մի թէ և դուք կամիք եր-  
» թալ յինէն : Ասէ ցնա Ը մաւոն . մեք հա-  
» ւատացաք և գիտացաք » (անդ . Եղի . 54) :

Առաքելոց հաղորդիլը իրենց մկրտութիւն  
սեպմիցաւ ըսելը մէկ մասնաւոր կարծիք  
մըն է . որ դար յետ ասէն ըսելով մէջ կը բե-  
րէ . և աղէկ քննութեամբ ալ չի հաստատ-  
վիր . քանզի ոտնալուայն հաղորդութեան  
խորհուրդէն առաջ ըրաւ Պրիստոս <sup>1</sup> . և  
ոտնալուային ատենը Պետրոսի ըսաւ . «ը-  
» ւացելոյն չ' ինչ պիտոյ , բայց զի զոտսն  
» լուանայցէ . քանզի ամենեւին ոուրբ է .

<sup>1</sup> Այսպէս ըլլալը կը գտնեմք Աւետարանչաց խօս-  
քը իրարու հետ բազդատելով: Ոտնալուայէն եաքը Քը-  
րիստոս նորէն սեղանը նստաւ (Յակ . ժգ . 12) . Առա-  
քեալներաւն սուրբ խորհուրդը տալէն եաքը անմիջապէս  
ելաւ Զիթենեաց լեռը գնաց (Մատթ . իգ . 30 : - Մարկ . ժգ .  
26 : - Ղուկ . իբ . 39) : Ուրեմն սուրբ խորհուրդը երկրորդ  
անգամ սեղան նստելուն հաստատեց :

”և դուք սուրբ էք . այլ ոչ ամենեքեան ”  
 (Յով. Ժգ. 10) : Անանկ է նէ այն ատենը  
 առաքեալները լուացված էին . այսինքն՝  
 մկրտըված էին : Տայց Յովհաննու վեցե-  
 րորդ գլուխը նկարագրական մտքով հաս-  
 կընալնին՝ իրենցմէ առաջ և իրենցմէ ետ-  
 քը եկեղեցւոյ մէջ եղած վարդապետուելը  
 համաձայն է . և սուրբն Խփրեմ ալ այս  
 կ'ընդունի . որ խօսքին կարդէն կ'իմացվի :

Դարձեալ սուրբ վարդապետը Քրիս-  
 տոսի հացերը շատցընելուն վրայ խօսելով,  
 որ Յովհաննու վեցերորդ գլուխին սկիզբը  
 կը պատմըվի , և Քրիստոս ալ այն հրաշքէն  
 առիթ առնելով հրաշալի խորհրդոյս վրայ  
 ընդարձակ խօսեցաւ , կ'ըսէ . “արար տէր  
 ոմեր ’ի սակաւ հացէ բազում հաց յանա-  
 պատի անդ . և ’ի կանա փոխեաց զջուրն  
 ”’ի գինի : Յառաջագոյն կանխեաց ընդե-  
 լցց և կրթեաց զքերանս նոցա հացիւ-  
 իւրով և գինւով , մինչեւ եղիցի ժամա-  
 նակ , զի տացէ նց զարիւն իւր և զմարմինն  
 ”ճաշակելով : Կերակրեաց զնոսա ’ի շահ ան-  
 ցաւոր հացին և գինւոյն , զի հասուցէ  
 ”զնո՞ ’ի շահ կենարար մարմնոյ և արեանն ”  
 (անդ . Եղլ . 121) : Ճաշակելով բառը նշա-  
 նաւորէ . որ հաւապաշչը բոլորովին դուրս  
 կը ձգէ : Եւ այս յայտնի վարդապետու-  
 թիւնս կարդալէդ եռքը երբ որ քիչ մը վար-  
 ինջնաս , և այն խօսքն ալ կարդաս՝ որ կ'ը-  
 սէ . “Օ այն զմանունս հացին և գինւոյն

”զոր ետ, զբերան անուշացանէին. իսկ  
”այն մարմնոյ և արեան՝ մտաց օգտակարք  
”լինէին. յորդորեաց զմեղ այնուիկ՝ որ  
”զքիմն քաղցրացուցանէ, զի ձգեսցէ  
”զմեղ առ այն ինչ՝ որ զոգիսն կեցուցա-  
”նէ”, ասոր գայթակղիւ պէտք չէ. քան-  
զի ճաշակելու տուած մարմին և արիւնը  
մարմնոյ և արեան տեսակաւ չէ. զգայա-  
րանքները հաց և գինի կը ցըցընեն. բայց  
ասիկայ միայն երեւոյթքն է. բուն ներքին  
գոյութիւնը փոխված և մարմին և արիւն  
եղած ըլլալը մտօք կը հասկըցվի. ուստի  
խոհուրդ և նշանակ մարմնոյ և արեան ալ  
կ'ըսվի հացն և գինին. չէ էութիւնը  
զատ ըլլալուն համար, այլ արտաքին երե-  
ւոյթքը բուն գոյութեանը չի համեմատե-  
լուն համար:

Դարձեալ սուրբն Ափրեմ՝ այն Ճառին  
մէջ՝ որ գրեց, թէ “Որդւոյն աստուծոյ  
”բնութիւնը քննելու հետաքրքիր ըլլալ  
”պէտք չէ”, դէպ ՚ի վերջը կ'ըսէ. երբ որ  
”հաւատքին աչքը լուսոյ պէս կը փայլի նէ  
”մէկ քրիստոնէի մը սրտի մէջ, բացէն կը  
”նայի և Աստուծոյ գառնը կը տեսնէ. որ  
”մեզի համար մօրթըլվեցաւ, և հանապաղ  
”մեղ մնուցանելու համար իրեն սուրբ և  
”անարատ մարմինը մեզի տուաւ: Այս  
”հաւատոյ աչքը ունեցողը հայեցողական  
”պայծառութք զԱստուծ կը տեսնէ, և  
”աղահով և լեցուն կատարեալ հաւատ-

”քով անարատ գառին սուրբ մարմինը  
”կուտէ՝ և արիւնը կը խըմէ . և այս սուրբ  
”և աստուածային վարդապետութե՛ վրայ  
”հետաքրքրական խնդիրներու չիյնար ”:  
Այս ճառս հայերէն թարգմանութեան  
մէջ չկայ . բայց Վ օսսիսի հաւաքմանց մէջ  
ջը կայ . որ Անդուելապիա տպված է | ա-  
տիներէն՝ երեք հատոր . 1619 թուին .  
(Հատոր . գ . Եղբ . 522 ) :

Առաջին կորնթացւոց մեկնութե՛ մէջ  
կ'ըսէ . “Յետ ընթրեացն բեկ և ետ նոցա  
”զմարմին և զարիւնիւր ”: Եւ քիչ մը ետ-  
քը . “Վ ասն այսորիկ բազումք են ’ի ձեզ  
”տկարք և հիւանդը՝ որ հարան մարմնովք  
”իւրեանց . զի յաներկիւղս մատեան նոքա  
”’ի մարմինն Քրիստոսի . և բազում մե-  
”ռեալք են , զի մատեան նոքա ’ի դեղն  
”կենաց առանց ահի գողութեան ” (Ո՞-  
տենագիր . սրբոյն Եղիշեմի . հատոր . գ . Եղբ . 72 . 73 ) :

## 15. ՍՈՒՐԲՆ ՈՊՏԱՏՈՍ

Ափրիկէի Միլէվ քաղաքին եպիսկոպո-  
սըն էր , և Դոնատեան աղանդաւորաց  
դէմ եկեղեցւոյ պաշտպանութի ընելով  
սուրբ անուան արժանացաւ : Քրիստոսի  
380 թուին մեռած կը կարծըմի : Ասիկայ  
Դոնատեաններուն կ'ըսէ . “Աստուծոյ սե-  
”զանները կործանելու պէս մեծ ամբարըշ  
”տութիւն կ'ըլլայ մի , որոնց վրայ ատեն

“մը գուք պատարագեցիք : Քրիստոս ձեւ  
“զի ինչ ըրած ունէր . որուն մարմինը և  
“արիւնը այս սեղաններուս վրայ ատեն մը  
“բնակեցան : Հայց գուք ձեր գարշելի չա-  
“րագործութիք կրկնապատկելու համար  
“բաժակներն ալ կոտըրուեցիք , որոնց մէջ  
“Քրիստոսի պատուական արիւնը կը դրա-  
“վէր : Ավարշելի մեղք . ալ անլուր չա-  
“րութիւն : Հրեայներուն նման եղաք :  
“Անոնք խաչին վրայ Յիսուսի Քրիստոսի  
“մարմինը ծակեցին . գուք սեղանին վրայ  
“անիկայ չարչարեցիք ” (Գիրք . Դ . Ընդունել  
Պարմենիոնի ) : | ուտերին օրովլը նորազանդ-  
ներուն ըրածին վրայ խօսած կը նմանի ե-  
րանելիս :

#### 16. ՍՈՒՐԲ ԿԻՆՐԵԱ ԵՐՈՒՍԱԼԵՄԱՑԻ

Քրիստոսի 350 թուին Երուսաղէմի  
եպիսկոպոս եղաւ . 357 ին Կեսարիոյ պա-  
ղետոինացւոց Ակալիսս անուն արիոսական  
եպիսկոպոսին հետ եկեղեցական իրաւա-  
քանութեանց վրայ վէճ ունենալով՝ արի-  
ոսականները գանդատ ըրին թէ եկեղեց-  
ւոյ անօթները և զարդերը կը ծախէ . որ  
իրաւ էր . սովոր ատեն ծախեր՝ և ստակովը  
քրիստոնեայ աղքանները հոգացեր էր ,  
ժողովքով Երուսաղէմի եպիսկոպոսութէն  
հանեցին . երկու տարի ետքը Աելեւկից  
ժողովքին մէջ վրճռըլեցաւ որ իր աթոռը

վերատին իրեն տըրպիլի . և Եկակիսս կեսարիոյ եպիսկոպոսութիւն հանվեցաւ : Ասոր օրովը երկինքը լուսաւոր խաչ մը երեցաւ 352 թուին . որուն յիշատակը Հայոց եկեղեցին կը տօնէ . Օտառկէն ետքը հինգեւրորդ կիրակին , Երեսան խաչ անունով : Այս հրաշքո տեսնելով շատ հրեայ և հեթանոս քրիստոնէութիւնը ընդունեցին : Ասոր տեղեկութիւնը նոյն սուրբ հայրապետը գրեց կաստանդ կայսեր . և այս նամակս Երեւման խաչի օրը եկեղեցւոյ մէջ կը կարդացվի : Եւ նոր հաւատքի եկողները կը թելու համար 18 ճառ խօսեցաւ . որ հայերէն թարգմանուած են երանաշնորհ թարգմանչաց օրովը , սուրբ հայրապետին վախճանէն 40 կամ 50 տարի մը ետքը . և տպված են Վիեննա , 1832 թուին : Ուրիշ ճառեր ալ ունի՝ խորհրդածութիւնք անունով . որ հայերէն թարգմանած չեն . կամ թարգմանութեան օրինակը մեղի հասած չէ : Առաջ հայրապետիս վախճաննէ՝ Քրիստոսի 386 թուին :

Այս սուրբ հայրապետս կ'ըսէ . «Որով հետեւ Քրիստոս հացին համար խօսելով յայտնեց՝ որ իրեն մարմինն է . և գիւնիին համար խօսելով յայտնի ըսաւ որ իւրեն արիւնն է , ասոնց Ճշմարտապէս աւսանկ ըլլալուն վրայ ովլ երկբայութիւն կ'ընէ : Ուստի այս Ճշմարտութիւնս՝ համին որպիսութենէն մի դատէք . այլ հա-

”ւատքնիդ կատարեալ ստուգութեամբ  
 ”ձեզի հաւատալ թող տայ որ դուք Յիսու-  
 ”սի Քրիստոսի մարմնովը և արիւնովը պա-  
 ”տուբված էք : Դիտցած ըլլաք , և բոլո-  
 ”րովին մի երկբայիք , որ հաց երեւցածը  
 ”հաց չէ , թէ և համը հացի համէ . այլ  
 ”Յիսուսի Քրիստոսի մարմինն է : Եւ գի-  
 ”նի երեւցածը գինի չէ , թէպէտ համը  
 ”գինիի կը նմանի , այլ Քրիստոսի ա-  
 ”րիւնն է ” ( Խորհրդածութեան . Ճառ . դ ) :

## 17. ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՁՈՒ

Իր ժամանակի աղանդաւորներուն դէմ  
 ախոյեան և եկեղեցւոյ դաւանութեանը  
 պաշտպան ըլլալով՝ Աստուածաբան անուա-  
 նը արժանացաւ . քանզի յօյնք և հայք այս  
 անունովս կը ճանինան այս սուրբ հայրա-  
 պետս : Կոստանդնուպօլսոյ Ա . ժողովքին ա-  
 տենը 381 թուին Կոստանդնուպօլսոյ պատ-  
 րիարք էք . նոյն ժողովքին մէջ սկաորիար-  
 քութենէ հրաժարեցաւ . և 391 թուին  
 մեռաւ :

Ասոր խօսքն է հետեւեալ բանը . “Երբ  
 ”որ Աստուծոյ արիւն և չարչարանք և մահ  
 ”լսէք նէ՝ մի գայթակղիք . այլ թէ որ կե-  
 ”նաց կը փափագիք նէ՝ առանց երկմտու-  
 ”թեան մարմինը կերէք և արիւնը խրմե-  
 ”ցէք ” ( Ճառ . Դ պատիկն ) :

## 18. ՍՈՒՐԲԻ ԳՐԻԳՈՐ ՆԻԽԱՑԻ

Առաջին վարչեղ կեսարացիին եղբայրն է՝ և՝ Նիւսեաց քաղաքին եպիսկոպոս։ Փիլիսոփայ և աստուածաբան։ այս ալգրտնը վեցաւ Կոստանդնուպօլաց ։ Ժողովրին մէջ, և մէռաւ 396 թուին։

Այս սուրբ հայրապետոս կ'ըսէ, « Իրաւունքը ունիմ հաւատալու՝ որ աստուածային բանիւ սրբագործեալ հացը Բանին աստուածոյ մարմին կը փոխվի . քանզի այս հացը Աստուածոյ խօսքովը և ազօթքով կը սրբագործի ինչպէս որ առաքեալը կ'ըսէ . չէ թէ կերպած և խրմված ատենը Բանին աստուածոյ մարմին կ'ըլլայ , այլնոյն բոպէին կը փոխվի խօսքով՝ և մարմին կ'ըլլայ . ինչպէս որ նոյն ինքն Բանն աստուած ըստաւ . այսէ մարմին իմ » (Ճառ կը լուսական հաւատոյ . Գլ. լէ)։

Առաջին հայրապետիս խօսքին մէջ երկու բան կայ յատուկ նշանակելոյ արժանաւոր։ Ոէկ մը՝ առաքելոյն խօսքը . « Արքի բանիւն Աստուածոյ և աղօթիւք » (Ա. Տիմոթ. դ. 4), որ սուրբ առաքեալը առ հասարակ ամեն կերակուրի համար կ'ըսէ , որ հայրապետոս մարմնոյ և արեան խորհրդոյն համար հասկըցած կ'երեւի . բայց անանկ չէ . Աստուածոյ խօսքին սրբիչ և կատարելագործող զօրութիւր առաքելոյն վկայութեամբը կը հաստատէ . անանկ որ՝ Աստ-

ուածային խօսքը ինչպէս որ զօրաւոր է ամեն կերակուր սրբելու , նոյնպէս և աւելի ևս զօրաւոր է այս հացս Քրիստոսի մարմին ընելու . ինչպէս որ ինքն էր ըսողը , «Այս է մարմին իմ» : Եւ այս խօսքս ըսված բողէին կը փոխվի կ'ըսէ : Ասոր վրայ քըրիստոնեայ աղքաց մէջ մէկ առերեւոյթ տարբերութիւն մը կը տեսնեմք . յոյնք և մեր աստուածաբաններէն ոմանք կ'ըսեն թէ Քրիստոսի խօսքը ըսվել լըմըննալէն ետքը Ճոգւոյն սրբոյ կոչմամբը հացն ու գինին մարմին և արիւն կ'ըլլայ : Ճուովմայ եցւոց աստուածաբաններուն շատերը կ'ըսեն որ Քրիստոսի խօսքովը կ'ըլլայ : Ասոր վրայ Ճշմարտութիւնը ինչ ըլլալը , և այս հակառակութիւնս լոկ առերեւոյթ ըլլալը մէկ ուրիշ նամակով մը հրամանոցդ համառօտ կը հասկըցընեմ :

Երկրորդ նշանակելու արժանի բանը այս է՝ որ հացն ու գինին միայն ճաշակած ատենը կը փոխվին և Քրիստոսի մարմին և արիւն կ'ըլլան ըսողներուն կարծիքը յայտնի խօսքով կը հերքէ : Եւ թէպէտ եկեղեցական պատմութիւնը չի սորվեցըներ որ սուրբ հայրապետիս օրը ասանկ ըսողներ կային . բայց ասիկայ խորհելով թէ կարելի է որ ասանկ ըսողներ ալ ըլլան , առաջկուց անոնց խօսքին առաջը կ'առնէ : Ուրբ Ճոգւոյն եկեղեցւոյ առաջնորդելը ասանկ է . ամեն Ճշմարտութիւն առաջ-

կուց կը սորվեցընէ . թէ և այն ատենը հա-  
կառակը ըսող չըլլայ . որպէս զի ամէն բա-  
նի մէջ յայտնի երեւի՝ որ Ճշմարտութիւ-  
նը հինէ . մոլորութիւն ետքէն վրայ կուգայ :

## 19. ՍՈՒՐԵԱ ԱՄԲՐՈՍԻՈՆ

Հաւատոց և եկեղեցական բարեկար-  
դութեանց սկաշապան . Ո՞իլանու եպիս-  
կոպոս էր մեծին Յէոդոսի օրովը . և 397  
թուին մեռաւ : Ասոր խօսքը քիչ մը ըն-  
դարձակ թարգմանեմք : “Ո՞վ դուք՝ որ  
”քիչ ատենէն ետքը աստուածային խոր-  
”հըրդոց հաղորդ պիտի ըլլաք , մտածե-  
”ցէք թէ ո՞րը աւելի գերազանց է . հրեշ-  
”տակաց կերակուր ըսվածը մի՝ որ Ասո-  
”ուած Խորայէլացւոց տուաւ անապատը .  
”Եթէ Յիսուսի Քրիստոսի մարմինը մի ,  
”որ իր էութեամբը կեանք եղողին մար-  
”մինն է . երկինքէն ինչած մանանայն մի ,  
”երկինքներէն վեր եղողը մի : Հրեայնե-  
”րուն համար ապառաժ քարին մէջէն ջուր  
”վազեց . այլ ձեզի համար նոյն խոկ Յի-  
”սուս Քրիստոսէն արիւն կը վազէ : Կա-  
”րելի է որ ինձի ըսէք . մենք ուրիշ բան  
”կը տեսնեմք կոր . ի՞նչպէս դուն մեզի կըր-  
”նաս հաւտրցընել որ մեր առածը Յոի  
”Քրիստոսի մարմինն է : Ահա մեզի ալ ա-  
”սիկայ հաստատել պէտք է : Աեղանէն  
”առածնիս՝ ընութիւնը ի՞նչ որ շինեց նէ

„այն չէ . օրհնութեամբ ի՞նչ որ սրբագոր-  
 „ծեցաւ նէ այն է . և այս օրհնութիւնս  
 „բնութենէն շատ աւելի զօրաւոր է . ու  
 „բովշեաւ նոյն խոկ բնութիւնը կը փո-  
 „խէ : Եւ ասոր անթիւ անհամար օրինակ-  
 „ներ կը գըտնեմք : Վավեսին ձեռքը դա-  
 „ւաղան մը կար . գետինը ձգեց , և օձ  
 „դարձաւ : (Օձին պոչէն բըռնեց վեր վեր-  
 „ցուց , շուտ մը նորէն առաջին ձեւն ու  
 „բնութիւնը ստացաւ : Յէ որ մարդու  
 „մը պարզ օրհնութիւնը՝ բնութիւնը ու  
 „բիշ կերպ դարձընելու չափ զօրութիւն  
 „ունեցաւ նէ , ի՞նչ ըսենիք բուն խոկ ասու-  
 „ուածային սրբագործութեանը համար .  
 „որուն մէջ ի՞նչ որ կ'ըլլայ նէ՝ ընողը նոյն  
 „խոկ Փրկչին խօսքն է : Քանզի այս խոր-  
 „հուրդս որ կ'ընդունիք՝ Քրիստոսի խօս-  
 „քովը եղած է : Աստուծոյ մեզի տուած  
 „օրինակները բանեցընեմք . և հաղորդու-  
 „թեան խորհրդոյն ճշմարտութիւնը՝ մար-  
 „դեղութեան խորհրդովը հաստատեմք :  
 „Յիսուսի Քրիստոսի Վարիամէն ծնանիը  
 „բնութե սովորական ճամբռվը մի եղաւ :  
 „Ամենեւին երկբայութիւն չունիմք . այն  
 „բանին մէջ այս կարդս չի պահպեցաւ .  
 „Քանզի այս ծննդեանս ամենեւին մարդ-  
 „դործակից չեղաւ : Յայտնի է՝ որ կուսի  
 „մը մայր ըլլալը բնութեան կարգի դէմ  
 „եղած բան մըն է : Արդ այս մարմինս որ  
 „այս խորհուրդիս մէջ առաջ կը բերեմք ,

„ նոյն խոկ սուրբ կոյսէն ծնած մարմինն է :  
 „ Այս խորհրդոյս մէջ Յիսուսի Քրիստոսի  
 „ մարմնոյն արտադրութեանը համար ին  
 „ չու բնութեան կարգ կըքընտըռէք . ու  
 „ բովիշետեւ տեառն մերոյ կուսէն ծնանիլն  
 „ ալ բնութեան կարգի դէմ է : Ասիկայ  
 „ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ մարմինն  
 „ է , որ խաջը ելաւ և թաղեցաւ : Ուստի  
 „ ըստ ճշմարտութե՞՝ այս խորհուրդո ալ  
 „ մարմնոյ և արեան խորհուրդ է : Յիսուս  
 „ Քա ինքն կ'ըսէ . — այս է մարմին իմ :  
 „ Երկնային խօսքերով եղած սրբագործու  
 „ թենէն առաջ ասոր ուրիշ անուն կըտըր  
 „ վի . բայց սրբագործութենէն ետքը՝ ա  
 „ սիկայ Յիսուսի Քրիստոսի մարմինն է :  
 „ Նոյնպէս կ'ըսէ . այս է արիւն իմ : Արք  
 „ բագործութենէն առաջ բաժակին մէջիւ  
 „ նը ուրիշ անուն ունի . այլ սրբագործու  
 „ թենէն ետքը Յիսուսի Քրիստոսի արիւ  
 „ նըն է : Դուք ալ ամէն կ'ըսէք . որ ճշարիտէ  
 „ ըսելէ : Անանկ է նէ՝ ինչ որ բերանովիդ  
 „ կը խօստավանիք նէ՝ սրտիւ ալ անոր ճըւ  
 „ մարտապէս հաւատացէք . և ներքին մըտ  
 „ բերնիդ՝ խօսքերնուդ համեմատ ըլլայ ”  
 (Հրահանգ հաւատոց առ նորահաւատու . Գլ. թ) :  
 Ուրիշ տեղեր ալ նոյն իմաստը կը յայտնէ .  
 բայց մենք ասկէց զատ վկայութեան կա  
 րօտ չեմք :

20. ՍՈՒՐԲՆ ԵՊԻΦԱՆ

Կիսլոս կղզին Ասղամինայ քաղաքին եսլիսկոսոս էր . իր ժամանակի երեւելի մարդոց ամենուն ալ ծանօթ և սիրելի՝ իմաստութեանը և սրբակրօն վարուցը համար . թէպէտ կենացը վերջին օրերը քիչ մը սուրբ Ասկեբերան հայրապետին հետ գժտութիւ պատահեցաւ մէջերնին . բայց իրարու ունեցած յարգութինին չի պակասեցաւ : Կոստանդնուպօլիսէն իւր վիճակը գառնալու ատենը նաւուն մէջ մեռաւ յամի տեառն , 403 :

Այս սուրբ հայրապետու եկեղեցւոց սուրբ խորհուրդները հաւատացելոց սորվեցուցած գրքին մէջ կ'ըսէ . “Կը տեսնեմք ”որ Տէրն մեր մէկ բան մը առաւ ձեռքը . ”ինչպէս որ աւետարանին մէջ կը կարդամք . ”Ելաւ , գոհացաւ ու ըստւ . ասիկայ այս ”ինչ բանն է : Բայց այս բանս իրեն առած մարմնոյն ոչ հաւասար է , և ոչ անոր հետ մէկ նմանութիւն մը ունի . անտեսանելի Աստուածութեանը ամենեւին ”նման չէ . իրեն գէմքին գծագրութիւնը ”և կերպարանքն ալ վրան չերեւիր : Այս ”բանս ձեւով բոլորակ է . ուժի կողմանէ ”ալ հասկընալ կ'ուզեսնէ՝ անզգայ է : Ասկայն իրեն չնորհացը ներգործութեամբը

”կամեցաւ յայտնել թէ ասիկայ մէկ ու  
”րիշ բան մըն է . և ճարդ չկայ որ անոր խօսէն  
”ըստն շնորհապայ . և ով որ չհաւասայ նէ՝  
”շնորհքէ և փրկութէ ինկած է ” (Անիր-  
բառ . Եի- . 37) : Ահա սուրբ Եղիշիան իր  
ատենը եկեղեցւոյ ունեցած հաւատքին  
վկայութիւն կուտայ :

## 21. ՍՈՒՐԲՆ ՅՈՎՃԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Աշխարհածանօթ հայրապետ, կոստան-  
դոնուազօլսոյ պատրիարք, որ աքսոր գնա-  
ցած ատենը Պոնտոսի կոմանա քաղաքը  
վախճանեցաւ յամի տեառն , 407 : Ասոր  
բազմաթիւ գիրքերէն և ձառերէն շատ  
վկայութիւններ կը գտնըվին խորհրդոյս վը-  
րայ , որ թէ որ ամենը ժողվելու ըլլայինք՝  
մեծկակ հատոր մը գիրք կ'ըլլար . ուստի  
երկու կամ երեք կտոր վկայութիւնները  
բաւական սեպեմք :

Խընդիր ընելով սուրբ հայրապետը՝  
թէ այս խորհուրդս ի՞նչ է , և ինչո՞ւ արր-  
վեցաւ , և ի՞նչ բանի օգուտ ունի , կ'ըսէ .  
“Աի մարմին եմք ամենեքեան և անդամք  
” ՚ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա . իսկ  
” հաւատով հանդերձ ուսեալքն զայս՝ ըզ  
” հետ եկեսցեն ասացելոցս . զի մի միայն  
” սիրով լիցուք մի՝ այլ և այսու իրօք ընդ  
” այն մարմին խառնիցիմք : Կերակրով այս  
” լինիցի , որով շնորհեաց մեզ : Քանզի

„կամեցաւ ցուցանել մեղ զփափագ սիրոյ  
 „զոր ունի առ մեղ . վասն որոյ խառնեաց  
 „և միաւորեաց զմարմինն իւր ընդ մեղ ,  
 „զի մի լինիցիմք ընդ նմա , զոր օրինակ  
 „գլուխ ընդ մարմինն միացեալէ ” : Աեր  
 Քրիստոսի հետ մեկ մարմին ըլլալը հազար-  
 դութեամբ կ'ըլլայ կ'ըսէ . միայն սիրով մի-  
 ացեալ չի մնալու համար կերակրով մեղ ե-  
 րեն հետ միացոյց . և այս կերակուրը ի՞նչ  
 էր . իր մարմինը մեղի հետ միաւորեց . քան-  
 դի այս կերակուրս իր մարմինն էր : Այս  
 խօսքէս անմիջապէս ետքը կ'ըսէ . “ Քանզի  
 ” յոյժ և անյագ վափագման այս է նշա-  
 նակ : Օսոյն իսկ Յոթ զեկուցանելով յա-  
 ” զագս ծառայիցն , և որով էր փափագելի  
 ” նոցա առաւել և անյագ սիրով , ուստի  
 ” զսանդակաթն լինել առ նա ցուցանելով  
 ” ասէին . ո՞վ տայր մեղ յագիւ ’ի մարմնոյ  
 ” նորա (Յ.Ֆ. լ. 31) – : Վ ամն որոյ և  
 ” Քրիստոս զնոյն զայս արարեալ ’ի մեծա-  
 ” գոյնսն կամեցաւ ածել զմեղ . և այսու-  
 ” յայտ արար զառաւել փափագ սիրոյ իւ-  
 ” րոյ զոր ունի առ մեղ . ըստ որում ոչ ե-  
 ” թէ ուսանել միայն զանձն իւր ետ մեղ  
 ” ցանկացողացս իւրոց , այլ և մերձենալ  
 ” և ուտել զմարմինն իւր՝ հպեցուցանե-  
 ” լով զատամունս մեր ’ի նա ” : Այս վեր-  
 ջին խօսքը նայելով կարծես թէ երանելի-  
 ին ազդում մը եղեր է , թէ ժամանակ պի-  
 տի ըլլայ որ՝ Քրիստոսի մարմինը ուտելը

Հաւատալու մոքով պիտի առնեն . և այս  
կերպ ծուռ մեկնութեանս առաջը առնե-  
լու համար՝ ուստեւ զմարմին իւր բաելուն ետ-  
քը՝ ինչպէս ուտելն ալ բացատրելը հարկ  
սեպեր է . հոյեցուցանելով զադամունս մեր ՚ի նա  
բաելով . այսինքն՝ մեր առզաները անոր  
դպրոնելով :

Սուրբ հայրապետը նոյն կարգը՝ և յի-  
շեալ խօսքերէն քիչ մը ետքը՝ խորհրդայս օ-  
գուտը ինչ ըլլալը բացատրելով կ'ըսէ .  
“Այս մարմին և արիւն խորհրդական  
հալածէ զգեւու, և հեռագոյն լինել առ  
նէ . և կոչէ զհրեշտակս առ մեզ և ըզ  
տէրն ամենեցուն . զի ուր երեեսցի մար-  
մին և արիւնս տէրունական՝ փախչին  
դեւք, ընթանան հրեշտակք : Քանզի ա-  
րիւնս այս հեղեալ՝ լուաց և սրբեաց զա-  
մենայն արարածս : Վ ասն արեանս այսու-  
րիկ բազում անգամ երանելին Պօղոս առ  
եբրայեցիսն գրաելով իմաստասիրեաց .  
“թէ օրինակ արեանս այսմ զանմտանելին  
զարբութիւն սրբոցն մաքրէր : Արդ՝ ե-  
թէ օրինակն այսքան զօրութիւն ունէր  
՚ի տաճարին հեբրայեցւոց, այլ և ՚ի մէջ  
եգիպտացւոցն ընդ սեամս գրոշմաքար  
ծեփելով այնպէս օգնէր՝ որչափ ևս ա-  
ռաւել Ճշմարառութիւնն : Օ ի թէ ա-  
րիւն գառինն որ նշանակէր զՊրիատո-  
սին՝ զսեամսն շաղախելով նշանէր և ըզ  
՚ի ներքան ազատէր ՚ի մահուանել, որչափ

” ևս առաւել արիւնն ճշմարիս հասեալ ’ի շը-  
” լունա մեր՝ սրբի ներքին մարդն և ազա-  
” տի ’ի մահուանէն յաւիտենից ո (ԱՌէն .  
Յովէ . Ճառ . խե . թղ . 481 . 482 . 483 :  
պա . կոստ . լունին 1717 ) : Այս տեղս ալ  
վերոյիշեալ զգուշութիւնը կ'ընէ սուրբ  
հայրապետը . ճշմարիս արիւն ըսելով և չէ  
թէ ճշմարիտ արեան յիշատակ և օրինակ .  
և մեր լունանքը կամ պըռղունքները կը հասնի  
ըսելով , որ չի կարծես թէ հաւատովճա-  
շակման համար կը խօսի : ‘Դիտելու բան  
մըն ալ այս կայ որ՝ սուրբ հայրապետը այս  
խօսքերս Յովհաննու վեցերորդ գլուխը  
մեկնած ատենը կը խօսի :

Քահանայական պատուցն մեծութեր  
համար խօսելով սուրբ հայրապետը՝ կ'ըսէ .  
“ Յորժամտեսանես զտէրն պատարագեալ  
“ և բաղմեալ , և զքահանայն ’ի վերայ կա-  
“ ցեալ պատարագին և աղօթաւոր , և զա-  
“ մենայնն կարմրացել պատուական արեամ  
“ բըն այնուիկ . կարծիցես թերեւս եթէ  
“ տակաւին ընդ մարդկան կաս և աստէն  
“ յերկրի բնականաս . և ոչ առաւել՝ եթէ  
“ յերկինս ՚ի վեր փոխեալ . քո և զամենայն  
“ մարմնական խորհուրդս հոգւց ՚ի բաց  
“ եղեալ , մերկ հոգւով և սուրբ մաօք  
“ շուրջ հայիս յերկնաւորսն անդր , ովքը  
“ քանչելեացս . ով Աստուծոյ մարդասի-  
“ րութեանն : Ով ընդ Հօր ՚ի բարձունս  
“ բազմի , ՚ի ժամուն յայնմիկ ամենեցուն

„ձեռք բառնան զնա . և որոց միանդամ  
„խնդրենն զնա՝ ասյ գիրկս ածել և ըն-  
„դունել . զոր և առ հասարակ ամենե-  
„քեան գործեն զայդ՝ աչօք հաւատոց ”  
(Յաղագս հահանայութեան . գ . 4) :

Աստիոքացւոց ժողովրդեան տուածքա-  
րողներուն մէկուն մէջը կ'ըսէ . “ Ամէն  
”բանի մէջ Աստուծոյ հնազանդ ըլլամք .  
”մեր մոքին և մեր աչքին հակառակ եկած  
”բաներուն անգամ անոր դիմադրութիւն  
”չընեմք : Այս կանոնս խորհուրդներուն  
”յարմարցընեմք : Ո՞եր աչքին երեւցածին  
”չի նայիմք , այլ անոր խօսքը նայիմք . քան-  
”զի մեր զգայարանքները կըսնան սխալիլ .  
”անոր ըսածը անսխալ է : Արովհետեւ  
”Բանն աստուած ըսաւ . — այս է մարմին  
”իմ . հնազանդիմք , հաւատամք , և հոգւոյ  
”աչքով այն մարմինը տեսնեմք . քանզի  
”Յիսուս Քրիստոս մեզի զգալի բան չի  
”տուաւ . այլ զգալի բաներուն տակը ա-  
”նանկ բաներ կուտայ մեզի , որ միայն հո-  
”գւով կ'իմացվին : Ո՞քան մարդիկ կան որ  
”հիմայ կ'ըսեն . կ'ուղեի որ ձեւը և կեր-  
”պարանքը և հագած լաթերը և ոտքը  
”հագածները տեսնեի : Ահա բուն ինքն  
”է որ կը տեսնես կոր . կը շօշափես կոր .  
”և մինչեւ անգամ կուտես կոր : Յէ որ  
”քանի որ Յուդայի մատնութիւնը և խա-  
”չը հանողներուն ապերախտութիւնը մը  
”տածես՝ քեզի սոսկում կուգայ նէ , ըդ-

” դուշացի՞ր որ դուն ալ անոր մարմինը և  
 ” արիւնը պղծող չի գտնըլիս , և ասով  
 ” յանցաւոր ըլլաս : Այս թշուառական  
 ” ները Քրիստոսի մարմինը սպաննեցին .  
 ” և դուն անիկայ պիղծ և աղտեղի հոգ  
 ” ւով կ'ընդունիս , անկէց այնքան աղէ .  
 ” կութիւն տեսնելէդ եաբը : Քանզի մարդ  
 ” ըլլալը և նախատինք կրելը բաւական չի  
 ” սեպելով , այն ալ կամք ըրաւ որ քեզի  
 ” հետ անանկ խառնըլի և միանայ՝ որ ա  
 ” նոր հետ դուն մէկ մարմին ըլլաք . այն  
 ” ալ չ' իւ չի հաւապուշյլեթօք և բուն ձբշ  
 մարտութեամք (Դառ . 60 . առ Ճողկուրեն  
 Անդիոչայ) :

Խորհրդոյս սահմանադրութեանը վրայ  
 խօսելով կ'ըսէ . “ Եւ ինքն էաբը անտի .  
 ” զի մի յորժամ լսիցեն զայն՝ ասիցեն . իսկ  
 ” արդ զիարդ . արիւն ըմալիցեմք և մարմին  
 ” ուտիցեմք , և խռավեսցին որպէս և յայն .  
 ” ժամ . քանզի և այժմ , յորժամ վասն սո  
 ” րին իրաց ճառեաց , բազումք գայթագ .  
 ” զեցին ՚ի բանիցն : Արդ զի մի և աստիր .  
 ” ուովեսցին , նախ ինքն արբ , զի առանց  
 ” խռավութեան ածիցէ զնոսա ՚ի հազոր .  
 ” դութիւն խորհրդոյն . նմին իրի իսկ յիւրմէ  
 ” արենէն ինձն արբ ո (ՄԵՀ . Մատի . Ճառ . ձբ :  
 հար . գ . Եղբ . 105 : պալ . Վ Էնէտիոյ . 1826) :  
 Այս խօսքիս մէջ բաժակին մէջի գինին  
 Քրիստոսի արիւնն է ըսելը՝ նորազանդնե .  
 բուն տուած մէկնութեանը մէկին ալ չի

յարմարիր . Քրիստոս իր մահը յիշելու  
համար գինի խմեց ըսել չըլլար . թէպէտ  
խըմածը լոկ գինի էր՝ բայց հաւատքով իր  
արիւնը խըմած եղաւ ըսել չըլլար : Հարկ  
կ'ըլլայ ըսել որ սուրբ Ասկերանն ալ հի-  
մակվան ուղղափառներուն պէս իմացաւ .  
այն ատենը ուր կը մնայ 1215 թուին եղած  
լատէրանու ժողովքին վճիռը . ուր մնաց  
831 թուին հաղորդութեան վրայ Ճառ շե-  
նելովնոր հաւատք քարոզող Պապասիոսը :  
Առնիք մէջ բերողները երբ որ Ամբրոսիոս  
հայրապետէն բերած վկայութինիս՝ ( պէս  
Մէր , Ա- , 19 ) , և Ասկերանին այս խօս-  
քը և ուրիշ հայրապետաց խօսքերը կար-  
գան նէ՝ հարկ կ'ըլլայ խոստովանիլ , որ մենիք  
ոչ Պապասիոս գիտէինք և ոչ լատէրանու  
ժողովք . ուրիշները մեզի պատմեցին . և  
մենիք ալ՝ անոնիք իմաստուն և հմուտ մար-  
դիկ են , և աւելարանական ըլլալնուն համար  
սուպ չեն խօսիր կարծելով՝ պարզամտութիւ-  
հաւատացինք : Երանի թէ ասանկ ըսելով  
Ճշմարտութեան հնաղանդին :

## 22. ՍՈՒՐԲՆ ՀԵՐՈՆԻՄՈՍ

Քահանայ և կրօնաւոր . բազմահմուտ  
մարդ . որ բոլոր հին և նոր կտակարանը ի-  
րենց բնագիր լեզուներէն լատիներէն  
թարգմանեց . և շատ հմտութիւններով ալ  
մեկնեց : Խեռաւ Քրիստոսի 420 թուին :

Ասոր գրուածքներուն մեջն ալ հայոք դութեան վրայ յայսնի զրուցվածքներ շատ կան . մենք երեւելիներէն մեկ քանին միայն առնեմք : “Ճշմարիտ հացը Ոտլսէս չի տու . աւ . այլ Քրիստոս միայն կուտայ : Ո՞ւզ Հացիերոյթի կը հրաւիրէ . և հոն մեզի կերակուր բուն ինքն է . և մենք բուն իսկ անիկայ կ'ուտաեմք ” ( նամակ առ Հեղինեա ) :

“ Խորհրդական զատիկը՝ և զատկական գառին ուտելը լմբննալէն ետքը Յիսուս Քրիստոս զատկին ճշմարիտ խորհրդ դպյն անցաւ . ինչպէս որ Ո՞ւլքիսեղեկ օրինակաւ հաց և գինի նուիրեր էր , Յիսուս Քրիստոս ալ իր մարմնոյն և արեանը ճշմարտութիւնը առաջբերաւ ” ( Ո՞ւին . Ո՞ւագիր . Գլ . իդ ) :

### 23. ՍՈՒՐԲԻ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Արբոյն Գրիգորի լուսաւորչի ազգէն՝ և մեծին Ներսէսի զաւակ . Հայոց հայրապետական աթոռը ժառանգեց 390 թուին . 428 ին նախարարները զինքը հայրապետութենէ ձգեցին . ետքը որպան որ զզջացան և լալով աղաչեցին որ նորէն աթոռը նատի՝ յանձնառու չեղաւ . բայց իրեն առանձնութեան ժամանակն ալ ազգին օգտին կ'աշխատէր : Երանելոյն Ո՞ւսրովքայ գործակցութեամբը ամբողջ անծաշունչ գիրքը յունարէնէն հայերէն թարգմանեց . և շատ

ալ վարդապետական՝ պատմական և բանասիրական գիրքեր թարգմանեց և թարգմանել տուաւ . որով ասոր ժամանակը գրադիտութեան կողմանէ մեր ազգին պանծալի դարը եղաւ : Հայրապետութենէ ելելէն տասն և երկու տարի ետքը մեռաւ

440 թուին :

Ասոր առանձին գրուածքներէն ամենէն երեւելի և գերապանծ են աւագ շաբթըվան շարականները , որ անհնարէ որ մէկ հաւատացեալ մը մտադրութեամբ կարդայ՝ և հոգւով ջերմեռանդութեան չի շարժի : Հոս բերած խօսքերնիս՝ աւագ հինգշաբթի օրվան շարականներէն են :

(Օրհնութեան շարականին մէջ կ'ըսէ . “Ի՞աշխէ զմարմին իւր և զարիւն , նոր ուխտ անուանեալ՝ և յիշատակ կամաւոր մահուանն , մերձեցելոցս ՚ի նա սրբ բութեամբ ” (Ը արական . իանոն աւագ հինգշաբթու ) : Այս խօսքիս մէջը երեւելի է սուրբ հայրապետին խորհրդածութիր , որ ներկայ ժամանակին համար խօսելով՝ որ Քրիստոս ինքը զգալի կերպով չերեւիր , տակաւին կ'ըսէ որ՝ սրբութեամբ անոր մօտեցողներուն՝ ինքն է որ իր արիւնն ու մարմինը կը բաշխէ . և այս բաշխելս ալ կամաւոր մահուանը յիշատակն է : Եւ այս խօսքս՝ տեառն մերց խօսքին մեկնութին է որ ըստաւ . “ Հացն զոր ես տաց մարմին ՚իմ է , զոր ես տաց վասն կենաց աշխար-

„Հի” ( Էջմ. դ. 52 ) : Երբ որ Քրիստոս  
պատարագիչքահանային ձեռօքը իրեն  
մարմինը և արիւնը կուտայ սրբութեամբ  
իրեն մօտեցողներուն՝ առնողը նոյն հետ-  
այն կը յիշէ որ՝ այս այն մարմինն է որ բո-  
լոր աշխարհի կենացը համար տրովեցաւ  
և խաչին վրայ արիւն թափեց : Երբ իմ  
մէկ երախտաւորս և բարերարս՝ շատ ժա-  
մանակ անկէց հեռու ըլլալէս ետքը տես-  
նեմնէ՝ նոյն հետայն անկէց տեսած աղէ-  
կութիւններս միտքս կուգայ . բայց ծաղ-  
րական բան մը ըլլալէն զատ՝ ապերախտու-  
թիւն ալ կ'ըլլայ , երբ որ ըսեմ թէ այն  
մարդը ինձի աղէկութիւն ընողին յիշատա-  
կըն է , բուն իսկ աղէկութիւն ընողը չէ :  
‘Մանապէս՝ երբ Քրիստոսի մարմինը և  
արիւնը ընդունիմ’ որ իմ և բոլոր աշխար-  
հի փրկութեան գին եղաւ , և ըսեմ թէ  
ասիկայ իմ փրկութեանս յիշատակն է . թէ  
որ միտքս այն ըսել ըլլայ թէ իմ փրկու-  
թեանս պատճառ եղող մարմինը ինքը չէ՝  
այլ անոր յիշատակն է , սոսկալի հայհու-  
թիւն և ապերախտութիւն կ'ըլլայ այս  
խօսքը : Քրիստոսի մարմնոյն համար յիշ-  
առակ ըսելը՝ մարմնոյն բուն էութիւնը չի  
վերցըներ . ուստի ով որ կ'ուզէ՝ որ յիշառակ  
բառը իրեն փաստ բռոնելով Ճշմարիտ մար-  
մին և արիւն ըլլալը ուրանայ , անանկին  
պէտք կ'ըլլայ սուրբ գրոց կամ հին հայ-  
րապետաց մէկուն գրքին մէջէն ցըցընել

որ հաղորդութեան խորհուրդը՝ Քրիստո-  
սի տեսառն մերոց ճարմինն ու արիւնը չէ՛, այլ  
անոր յիշապակն է : Եօրք որ մէկ բառ մը մի-  
նակ մնալով երկու կերպ մոքի կրնայ առ-  
նըմիլ այն բառը այն մոքերուն մէկը կամ  
մէկալը հաստատելու զօրութիւն չունե-  
նար, մինչեւ որ անոր տարտամ նշանա-  
կութիւնը որոշելու ուրիշ բառ մը քովը  
չի դրվի : Առաղանդները երբ որ յիշապակ  
բառը ձեռք առնելով՝ մէկ մեծ յաղթու-  
թիւն մը ըրածի պէս կ'ըսեն թէ՝ տեսա՞ր,  
յիշապակ կ'ըսէ կոր, ապա ուրեմն ճշմարիտ  
մարմին ըլլալը ընդունիր կոր, այս կանո-  
նըս չգիտնալնին կը ցըցընեն : Յիշապակ բա-  
ռը մենք ալ կը ընամք գործածել սբ խոր-  
հըրդոյս համար . ուստի մեր հաւատքը  
սուրբ գրոց դէմ ըլլալը մեզի ստուգե-  
լու համար այդ բառը սուրբ գրոց մէջ  
փրնտըռել՝ գըտնել՝ և մեզի ցըցընելը պա-  
րապ աշխատութիւն է . պէտք է սա խօս-  
քըս, կամ տսոր նման ուրիշ մէկ խօսք մը  
գըտնել, հաղըրդութեան խորհուրդը՝ Քրիստոսի  
ճարմինը և արիւնը չէ՛, այլ անոր յիշապակն է :  
Այլ այս խօսքս ալ փրնտըռելու թող չի  
յոդնին . քանզի թէ որ սուրբ գրոց մէջ  
ատանկ խօսք մը ըլլար նէ՝ քրիստոնէական  
ընդհանուր եկեղեցին այդ խօսքին հակա-  
ռակ հաւատք ունենալը անհընար էր :  
Դանք սբ հայրապետին ուրիշ խօսքերուն:  
‘Այն օրհնուել շարականին մէջ կ'ըսէ .

“Ար մարմնով և արեամբ քով ցուցեր ըդ  
 “Թողութիւն մեղաց , որ միշտ պատարա-  
 “գիս ’ի մեզ անծախապէս” : Քրիստոսի  
 մարմինն ու արիւնը՝ մեղաց թողութիւն  
 ըլլալը սուրբ Պօղոս առաքեալը յայտնի  
 խօսքով կը ծանուցանէ . “Փոխեաց զմեղ  
 ” յարքայութիւն որդւոյն իւրոյ սիրելոյ .  
 ” որով ունիմք զփրկութիւն արեամբն նր՝  
 ” և զթողութիւն մեղաց մարմնովն նորա”  
 (Կողը . ա . 13 . 14) : Այն մարմինն ու ա-  
 րիւնն է՝ կ’ըսէ սուրբ հայրապետը , որ ա-  
 մէն օր մեր մէջը քահանային ձեռօքը պա-  
 տարագ կը մատչի և զոհ կ’ըլլայ առ Աստ-  
 ուած . այն մարմինն է՝ որ ամեն օր կ’ուտավի ,  
 ինչպէս որ զոհից միսերն ալ կ’ուտավին ,  
 (ԳԵՂԱՎԵՐԸ , ԵՒ- . 10 , ԱՆ-ՐԵ | ՌԱՄ-ՌՅՈՒՆ ԽՕՏՔ) .  
 բայց չի հատնիր , և հատնելիք չունի : “Ար  
 ” միշտ պատարագիս ’ի մեզ անծախապէս” :

Նոյն շարականին մէջ կ’ըսէ . “Իան  
 ” հօր և քահանայապետ ճշմարիտ . որ զաշ  
 ” խարհակեցոյց զմարմին և զարիւնդ քո  
 ” բաշխեցեր յառաքեալսն . այսօր հաղոր-  
 ” դին հողեղէնքս աստուածային խորհրդ-  
 ” դոյդ” : Քրիստոսի բանին հօր քահանա-  
 յապետ ըլլալը՝ Պօղոս առաքեալը յայտնի  
 խօսքով կը բացատրէ . “ԱՅԼ Քրիստոս ե-  
 ” կեալ քահանայապետ հանդերձելոցն բա-  
 ” րեաց , մեծաւն և կատարելով և անձե-  
 ” ռագործ խորանաւն , այսինքն է՝ որ ոչ  
 ” յայսց արարածոց , և ոչ արեամբ նոխա-

„զաց և զուտրակաց , այլ իւրով արեամբն  
 եմուտ միանգամ ՚ի սրբութիւնսն յաւի-  
 տենականս գտեալ զիրկութիւն ” (Եֆր .  
 թ . 11 . 12) : Առւրբ առաքեալը ուրիշ տե-  
 ղերն ալ շատ կը խօսի Քրիստոսի քահա-  
 նայապետութեանը վրայ : Այս քահանայա-  
 պետս՝ ժողովրդեան մեղացը քաւութեան  
 համար Նօր աստուծոյ նուիրած մարմինն  
 ու արիւնը առաքեալներուն ալ տուաւ ,  
 և մենք ալ այսօր այս աստուծածային խոր-  
 հըրդոյս կը հաղորդիմք կ'ըսէ : Գուցէ հա-  
 կառակորդները ըսեն թէ այդ գաղափարը  
 սուրբ գրոց դէմ է . որ մեղաց համար եւ-  
 զած զոհին արիւնը գետինը թափել՝ և մի-  
 սը բոլորովին այրել կ'ապրազըքէ (Պետ .  
 դ . 18 . 21) : Եւ զոհին մարմինը ուտելէն  
 և արիւնը խրմելէն առնըլած համեմա-  
 տութիւնը՝ թէ ուրեմն Քրիստոսի մարմինն  
 ալ պէտք է որ ուտեմք՝ և արիւնը խմեմք ,  
 հեթանոսական սովորութէ առնըլած մէկ  
 համեմատական հետեւութիւն մըն է : Ա-  
 սոր կը պատասխանեմ նախ . վասն յանցանաց  
 զոհ եղած խոյին համար սուրբ գիրքը կ'ը-  
 սէ . “ Ամենայն արու քահանային կերիցեն  
 ” զայն . ՚ի նը տեղւոջ կերիցեն զայն . քանզի  
 ” սրբութիւն սրբութեանց է : Որպէս ըզ  
 ” վասն մեղացն , նոյնպէս զվասն յանցա-  
 ” նացն . օրէն՝ մի և նոյն կացցէ նոցա . և  
 ” քահանայն որ քաւիցէ նովաւ՝ նմա լիցի ”  
 (Պետ . է . 6 . 7) : Անանկ է նէ՝ զոհին մսէն

չուտելը՝ ամէն զոհի համար չէ եղեր, միայն ողջակեղ ըլլալու զոհէն չուտվիր. քանզի անիկայ բոլորովին Աստուծոյ նուիրված է, մարդու պիտոյից խեր չունի. ուստի անիւ կայ պիտի այրըվի : Ուրիշ զոհերուն միար պիտի ուտավի, ուրեմն զոհին միար ուտելէն առնըված համեմատուիլ՝ հեթանոսական սովորուէտ առնըված չէ : Կը պատասխանեմ երկրորդ . այն զոհերէն փրկութիւն ըլլալիք չկար . “ Վէ կարէր արիւն նոխազացն և ” ցլուցն բառնալ զմեզս ” (Եֆր. Ժ. 4). քանզի թէ որ անոնցմով փրկութիւն ըլլար նէ՝ նոյն զոհերը անպիտան սեպելով զոհելու համար ուրիշ ոչխար և գառն փընտըռ ոել պէտք չէր ըլլար . քանզի “ Ուր թողութիւն է՝ ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ ” (անդ. 18) : Եւ այն արիւնը էապէս մեր փրկութեանը վերաբերեալ բան մը չունենալով, այլ մեր փրկութեան պատճառ եղող արեանը օրինակ ըլլալով, հարկ չէր որ ուտավէր կամ խըմվէր, և անով ներքին միութեամբ մեր մարմնոյն հետը միանայր . քանզի անով՝ Քրիստոսի արիւնէն մեղի եղած փրկութիւնը՝ նոյն արեանը օրինակին տալ կ’ըլլար : Ի՞այց Քրիստոսի փրկարար արիւնը գինւոյ տեսակի տակ ձաշակելով՝ նոյն իսկ Քրիստոս անմիջապէս մեր մէջը կը բնակի . “ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ և ես ’ի նմա ” (Յով. դ. 57) . և ասով

Քրիստոսի հետ միանալով յաւիտենական կենաց արժանի կ'ըլլամք . “Որ ուտէ զմար . ” մին իմ և ըմպէ զարիւն իմ” ունի զկեանս ” յաւիտենականս . և ես յարուցից զնա ” յաւուրն յետնում” ( անդ . 55 ) :

Ուռրբ հայրապետին ուրիշ խօսքերը ընդարձակ մեկնութիւն չեն ուղեր . որ ասոնք են : “ Այսօր վերստին նորոգեցաք ’ի ” յանիծից նախահօրն , ճաշակելով զմար . ” մին և զարիւն Որդւցն աստուծոյ : Անա ” պականութե աղքիւր , զկենդանարարդ ” բաշխեցեր զմարմինդ քո . նորոգելով ըդ ” մահացեալսն յանցանօք ’ի պատրանաց ” թշնամւցն : Որ ’ի խորհուրդս փրկականս ” եկեղեցւոյ բաշխեցեր աշակերտացն ըզ ” մարմինդ քո , նորոգելով զմահացեալսն ’ի ” ճաշակմանէ . հաղորդս այսմ ընկալ զմեզ ” միայն մարդասէր : Որ յաթու փառաց ” նստիս ընդ չօր , այսօր բազմիլ ընդ աշակերտան յանձն առեր՝ բաշխելով զմար . ” մին և զարիւն քո սուրբ ո :

Ասոնցմէ կ’իմանաս չէ թէ այն միայն՝ թէ սուրբ հայրապետը Բնչակէս կը սորվեցընէր , այլ և՝ թէ եկեղեցւոյ հաւատքը Բնչէր . քանզի այս խօսքերս հասարակաց ժամերգութեան ժամանակը զրուցվելու համար շինված են . և թէ որ այս խօսքերուս մէջ եկեղեցւոյ հաւատոցը դէմ բան մը եղած ըլլար նէ՝ անհնար էր որ ասոնք եկեղեցւոյ մէջ ընդունելի ըլլային :

Առանձին մատենագրութիւն մը չունի սուրբ Հայրապետը՝ որ մեր ձեռքը հասած ըլլայ . և թէ որ գրտնըվէր նէ՝ անշուշտ գիտէինք որ այս սուրբ խորհրդոյս վրայ նոյն վարդապետութիւնը կը խօսէր՝ ինչ որ եկեղեցական երգոց մէջ խօսեցաւ : Բայց մէկ ուրիշ բան մը կայ որ յիշատակելու արժանի է :

Այս սուրբ Հայրապետս Արտաշիր թագաւորին պաշտպան կենալուն համար՝ նախարարները պարսից թագաւորին մատնեցին և բանտը դնել տուին . ետքը զղանալով աղատեցին . և շատ աղաչանք ըրին որ վերստին ազգին հայրապետ և կաթուղիկոս ըլլայ : Աղաչանքնին ընդունեց երանելին . և կարծիք չի տալու համար որ ըրածներնուն նեղացեր է . և աղաչանքնին անոր համար ընդունիր , տեսիլք մը պատմեց որ տեսեր էր « Ի մեծի հինգ շաբաթու ջըն ՚ի զատկի աղու հացիցն ՚ի հսկման , ՚ի հաղորդեալ ՚ի ժամերեկեկոյին՝ պաշտաման ՚արբոյ և մեղսաքաւիչ խորհրդոյ կենարաւըրին » : Եւ այս տեսիլքիս մէջ իրեն անանկ երեւեցաւ՝ որ « Ի վերայ սեղանոյն ոկայր հաց մի սուրբ , և ողկոյզմի խաղողոյ .

1 Կարծեմթէ « ՚ի մեծի լաբալովն , ովհատի ըլլայ . մէկ մը՝ որ զարդի աղուահացի կ'ըսէ . և այս անունս աւագ հինգշաբթի օրվան չի յարմարի , ճրագալուցի օրվան կը յարմարի , որ մեծպաքին ու զատկին մէջ տեղն է : Եւ երկրորդ՝ որ ՚ի ժամ երեւոյին կ'ըսէ սուրբ խորհրդոյն հաղորդիլը . որ նոյն շաբաթ օրվան համար սովորութիւն ըլլալը գիտեմք :

„ըստ պատուականութեան խորհրդոյ երկ-  
 „նաւոր փրկութեան” : Եւ հրեշտակը այս  
 տեսիլքին խորհուրդը բացատրելով կ'ը-  
 սէ . “ Ի՞նդ որով կայր սեղանն ուկի ՚ի պա-  
 „տուական ականց ընդելուզեալ , զսրբոյ  
 ” Երրորդութեն ծանուցանէ զմիասնակա-  
 „նութիւն . որ զվարս և զճգնութիւն ար-  
 ” դարոցն , որպէս զպատուական ականց զա-  
 „նազանումն առ ինքեան տպաւորեալ զու-  
 ” արձացուցանէ . որք զմարմին և զարիւն  
 ” փրկչին արժանաւորապէս Ճշմարտութը  
 ” բազմեալք ընդ նմա , Ճաշակեն ՚ի սուրբ  
 ” սեղանոյն ” (Ղաղար Դարձեցի . Խլ . 50 .  
 52 . 56) : Ճշմարտութեամբ բառը նշանաւոր  
 է այս զրուցվածքիս մէջ . որ Քրիստոսի  
 տեառն մերոյ իրօք ըստ մարմնոյ այն սեղա-  
 նոյն վրայ ներկայ ըլլալը կը ցըցընէ . թէ  
 այս բառս բաղմեալբառին հետ առնես , և  
 թէ ճաշկիւն բառին հետ : Ճշմարտութեամբ  
 Քրիստոսի տեառն մերոյ հետ նապեցան ըսես  
 նէ՝ կ'ըլլայ վերջին ընթրեաց ատենը առա-  
 քեալներուն Քնի հետ նատելուն պէս ,  
 երբ որ հացը ձեռքը առաւ , այս է մարմին իմ  
 ըսելով իրեն մարմին ըրաւ . և գինին այս է  
 արդեն իմ ըսելով իրեն արիւն ըրաւ և առա-  
 քեալներուն տուաւ : Ու որ ճաշկիւն բա-  
 ռին տաս նէ՝ ըսել կ'ըլլայ , Ճշմարտութը  
 կը ճաշակեն . Բնչը . “ զմարմին և զարիւն  
 ” փրկչին ” : Քառին քերականական որոշումը  
 որ դին տանիս նէ՝ մի և նոյն միտքը կ'ելլէ :

Գուցէ մէկ երկբայութեան մը սպառ-  
ձառ տայ ետքի խօսքը , որ հրեշտակը վե-  
րայիշեալ խօսքէն անմիջապէս ետքը կ'ըսէ .  
“ Իստ երեւելոյ քեզ՝ հացն և ողկոյզն ՚ի  
” վերայ սեղանոյն , օրինակ մարմնոյ և ա-  
” րեան կենարար չարչարանացն տեառն  
” ցուցանի ( անդ . 56 ) :

Ի՞այց երկբայութեան տեղի բնաւ չկայ-  
թէպէտ կ'ըսեմք՝ որ հաղորդութեան խոր-  
հրդոյն մէջ հացը՝ Քրիստոսի Ճշմարիտ մար-  
մին կ'ըլլայ , և գինին՝ Քրիստոսի Ճշմարիտ  
արիւն կ'ըլլայ . բայց բնաւ մարդ չըսեր որ՝  
սեղանին վրայ դրված հացը նոյն իսկ սե-  
ղանին վրայ դրված ըլլալովը և առանց սրբ-  
բագործութեան՝ Քրիստոսի մարմին կ'ըլ-  
լայ . և խաղողին ողկոյզք՝ գինին անկէց շին-  
վելուն համար՝ Քրիստոսի արիւն կ'ըլլայ :  
Այս բաներս՝ որ սուրբն Աստակ իրեն տե-  
սիլքին մէջը սեղանին վրան դրված տեսած-  
էր , Քրիստոսի մարմնոյ և արեանը միայն  
օրինակ էին . մարմին և արիւն չէին : Ի՞այց  
նոյն իսկ օրինակ ըլլալնին կը ցըցընէր թէ  
սեղանին վրայ գտնըվելու՝ Քրիստոսի Ճշմա-  
րիտ մարմինը հացէ կ'ըլլայ , և Ճշմարիտ ար-  
իւնը՝ խաղողէ շինված գինիէ կ'ըլլայ . և  
հրեշտակը՝ որ ասոնց համար օրինակ էին կ'ը-  
սէ , երբոր ճաշակման վրայ խօսեցաւ նէ՝  
“ զմարմին և զարիւն փրկչին Ճշմարդութեամբ  
ճաշակեն ” ըսաւ :

## 24. ՍՈՒՐԲԻՆ ՄՈՎԱԽԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Երանելոյն Ամհակայ՝ և անոր գործակ ցին սբյն Վեսրովքայ գլսաւոր աշակերտն է . բազմահմուտ և բազմաշխատ մարդ : Ամհուանը Ճիշդ ժամանակը չեմք կրնար գիտնալ . բայց որովհետեւ իր պատմութիւնը սրբոյն Վեսրովքայ մահուամբը կը վերջացընէ , որ 441 թուին մեռաւ , և ինքն ալ այն ատենը ծեր էր , և Վարդանանց ժամանակը ասոր անունը չկայ , որ երեւելի մարդ ըլլալուն համար յիշվելու էր , գո՞նէ Արտաշատու Ժողովքին մէջ , որ պարսից թագաւորին գրած մոլորական թղթոյն պատասխանելու համար եղաւ 450 թուին , ուստի երանելի ծերունւոյս ալ մահը կ'ըլլայ 441 և 450 թուին մէջ տեղը :

Ասիկայ Վարդավառի ճառին մէջ՝ առաքեալներուն ժամանակի հաւատացելոց համար կ'ըսէ . “ զոգին սուրբ յայտնաւ ” պէս հաւատացեալքն տեսին խմբիւք եւ “ կեալ յաւաղանն լուսոյ և ’ի սեղանն որ ” ’ի վերայ կենարար մարմնոյ և արեան Ած “ որդւոյն ” (Առաքենագրութիւնն խորեն . Եղլ . 336 : Պատ . Վէնէպիոյ . 1843) : Առաջն և բիւն Առաքուածորուոյն ըսելով ինչ բան հասկըցընել ուզելը անհնար է որ խօսքին կարգէն չի հասկըցվի : Վեղանին վրայ՝ այս անուններովս հասկըցվելու բան՝ միայն ամենասուրբ հաղորդութիւնը կրնայ ըլլալ :

Հովիվախմեանց ճանապարհորդութեա  
պատմութեանը մէջ նոյն երանելին կ'ըսէ .  
“տեղիք նոցա կոչին Ուրբաթայրք . քանզի  
” ’ի յուրբաթէ յուրբաթ մատուցանէին  
” (Երկուք ոմանք ’ի քահանայիշն՝ ինչպէս  
”որ քիչ մը վերը կ'ըսէ ), զարբութեամբ  
”պատարագն . և բաշխէին արժանաւորա-  
”պէս սուրբ կանանցն զմարմինն և զարիւ-  
”նըն տեառն ” (անԴ . Ի.Պ. . 302) : Քահա-  
նայից սրբագործած պատարագը որ ժողո-  
վրդեան կը բաշխեն՝ մարմին և արիւն կը  
ճանչնայ երանելին . որ ուրիշ տեղմը կե-  
նաց դեղըսելով կը բացատրէ . և մէկ ու-  
րիշ պարագայ մըն ալ կեվելցընէ վրան , այ-  
սինքն՝ թէ և քահանայն անարժան ըլլայ ,  
տակաւին անոր սրբագործածը և մատա-  
կարարածը՝ իշխաց դեւէ : Արշակ թագա-  
ւորին Փառանձեմ անուն տիկնոջը համար  
” կը պատմէ՝ որ “անարժանիւ ոմամբ սուտ  
” անուն քահանայիւ ’ի կենաց դեղն զմա-  
” հացուն խառնեալ ետ Ողոմպիադայ ա-  
” ռաջին կնոջն Արշակայ , և ելոյծ ’ի կենաց  
” սակս տիկնութեանն մախանաց ” (Պատմ .  
գ . 24) :

Հնդկաստանի կալկաթա քաղաքը իրա-  
րու ետեւէ քանի մը տետրակներ տպված  
են ասկէց քանի մը տարի առաջ՝ Թրակուլա-  
ված նորաղանդներուն քարողիչներուն տը-  
պարանը . ասոնց մէկին մէջ , որոյ վերնա-  
դիրն է՝ յորուր առ գրագիւղութեան , թիւ 13 .

և տպված է 1840 թուին նոյեմբեր ամսոյն մէջ, անանկ բան մը գրած կը գտնեմք, որով Ողօմալիադա թագուհին այս կերպովս մեռցընողքահանայն կ'արդարանայ։ Նոյն տետրակին խօսքը իր լեզուովը հոս օրինակեմք։ և ետքը հեղինակին չէ թէ հաւատքին՝ այլ պարզապէս մարդկային տրամաբանութեանը ուժը տեսնեմք։ Այս հեղինակիս ըստած խօսքն է այս։

“Գոյափոխութիւն հաւատացողքն շատ անդամ ասում են։ մեր փրկիչ Յիսուսն ասել է . այս է հացն որ յերկնից իջեալ է . . . (Յու. գ. 50—59)։ Եւ այս քանի մի համարներովն ջանաման են (այսինքն՝ կը ջանան) գոյափոխութեան վարդապետութիւնն հաստատեն։ Ասն ուրոյ ասում են. սեղանումն օրհնեալ նրա խարքն և գինին՝ առանց կարծեաց Քնայ մարմինն և արիւնն է փոխարկվում և լինում. ինչպէս որ վերն մին մին տպվէց։ Ուրեմն շատ խոնարհութեալ խնդրվում է գոյափոխութիւն հաւատացողացմէ, որ եթէ ընդունեն, և հրաման տան, նշխարքի խմօրի հետ փոքր ինչ մոլախինդ կամ մինադեղ խառնվի առանց քահանայի գիտութեանն, և յետոյ նշխարքն շինվի, տանվի սեղանն որ քահանայն պատարագ առի (այսինքն՝ պատարագ ընէ)։ Եթէ որ գոյափոխութիւնն ճշմարիտ լինի՝ ուրբեմն մոլախինդ և մինադեղն մարմին կը

” փոխարկվին . Ժմարար քահանէն առանց  
 ” մին վտանգի երկիւղ կարող է սոյն այս  
 ” օրհնեալ նշխարք և բաժակն ճաշակի . և  
 ” յետ ճաշակվելէն եթէ որ կենդանի մը  
 ” նայ՝ ուրեմն գոյափոխութեան ճշմար-  
 ” տութիւնն ամենեքեանն ականատես կը  
 ” լինեն , և իւրեանց տեսածն կը վկայէն ”  
 (Եղբ . 121) : Ահա ասոնք գրող մարդուն  
 խնդիրը կատարվեր է ժամանակով . Փա-  
 ռանձեմ շաք խոնարհութեամբ խնդրեր է այն  
 քահանայէն՝ որ Աղօմազիադայի հաղորդե-  
 լու ատենը սուրբ խորհուրդին մահաղեղ  
 խառնէ . Տոլախին՝ կամ մնադեւ ըլլալը չեմք  
 գիտեր . բայց ի՞նչ որ էր նէ՝ մեռցընող բան  
 մըն էր . Աղօմազիադա մեռաւ . ուստի այդ  
 առ Գրադիպութիւն յորդորու մարդը մենք ալ  
 կը յորդորեմք , որ առ Տարդասպանութիւն և  
 ամբարշտութիւն ալ մարդ չե յորդորէ :  
 Փառանձեմ փորձեց՝ և ասոր ուզածին պէս  
 ելաւ . իրեն ալ պէտք է այն խրառը տա-  
 լով Փառանձեմայ մեղսակից ըլլալը իրեն  
 հերիք սեպել : Ի՞այց ուրիշ բան մըն ալ կայ  
 անոր մտածելու : Ո՞ինչեւ այսօր մարդ ը-  
 սած չունի որ՝ հաղորդութեան խորհրդոյն  
 մէջ Վրիստոսի մարմին և արիւն փոխար-  
 կրվելու՝ հացէն ու գինիէն զատ յարմար  
 նիւթ եղած ըլլայ : Ուստի ի՞նչ օտար նիւթ  
 որ հացին և գինւոյն հետ խառնրված կ'ըլ-  
 լայ , թէ փոխարկումէն առաջ և թէ ետ-  
 քը , անիկայ բնաւ երեկը Վրիստոսի ոչ

մարմին ըլլալիք ունի և ոչ արիւն :

Այս հեղինակիս իրեն տրամաբանութեանը ուժը իրեն սորվեցընելու համար՝ այս տեղս սա խորհրդածութիւնս ալ եվել ցընեմք : Վարդս ինչ որ ուտէ նէ՝ ստամոքսին մէջ կը հալի , մամաց կը փոխվի , և անկէց եաբը մարդոյս արիւն , և հետեւաբար միս և ոսկոր կ'ըլլայ . ըսելէ որ՝ մարդոյս մարմնոյն և արեանը կը փոխարկըվի : Եւ բնութեան օրէնքը այնպէս է՝ որ կերած կերակրոյն մէջը արիւն ըլլալու յարմարութիւն չունեցող բաներ կան նէ՝ բնութիւնը անոնք դուրս կը նետէ : Այս բժշկական ծանօթութիւնս դնելէն եաբը՝ մենք կառաջարկեմք նոյն յորդութակը գրողին , որ իրեն ըսած երկրորդ փորձը ինքն ընէ իր վրայ . որ սրբագործելի նշխարին կամ գիւնիին հետը փրսխեցուցիչ դեղմը խառնել ասլրապրեր էր . անանկ դեղմը թող խառնէ իր ուտելու սովորական կերակրոյն հետ . եւ երբ տեսնէ որ այն դեղը մտմաց չի փոխվելէն դատ՝ բնապէս մամաց փոխվելու բանն ալ չի թողուր որ մամաց և արիւն ըլլայ , չի թողուր ալ՝ որ թէ որ պիտի չի փոխվի նէ՝ ուրիշ չի փոխվելու նիւթերուն ճամբան ալ բըռնէ , ուրիշ ճամբով դուրս ելլէ , այն ատենը թող մտածէ թէ ինչո՞ւ համար ասանկ եղաւ . թող բժիշկներուն ալ հարցընէ . և հասարակ կերակուրի հետ խառնրված փրսխե-

ցուցիչ գեղին ներգործութեանը համար ի՞նչ պատասխան կը գտնէ՞ նէ՝ Քրիստոսի կենարար մարմնոյն և արեանը հետ խառնըված մեռցընող թունոյն կամ փսխեցընող գեղին համար ալ նոյն պատասխանը հերիք թող սեպէ :

## 25. ԵՐԱՆԵԼԻՆ ԵԿԱՏԵ

Այս ալ թարգմանչաց աշակերտն է՝ և Վավես խորենացիին աշակերտակից . Ասուածաշունչի քանի մը գրոց վրայ մեկնութիւններ , և տնօրինական տօնից վրայ և առաքելոց վրայ և ուրիշնիւթերու վրայ Ճառեր ունի . ամենէն երեւելին է պատմութիւնը , որ Վարդանանց պատերազմին վրայ գրեց : Այս պատերազմն եղաւ Քրիստոսի 451 թուին . և Եղիշէի պատմութիւնը կը հասնի մինչեւ հայոց նախարարներուն աղատումը , որ եղաւ Քրիստոսի 464 թուին : Եղիշէի մեռնելուն Ճիշդ ժամանակը չեմք գիտեր . բայց յիշեալ թուականէն ետքը ըլլալը յայտնի է :

Այս երանելի վարդապետա՝ պարսիկ մոգպետին քրիստոնեայ ըլլալը պատմելով կ'ըսէ . «Ուզգէր ՚ի տան իւրում աւազան . » և ընդունէր ՚ի նոցանէ զսուրբ մկրտութիւնն . հաղորդէր ՚ի կենդանարար մարմինն և ՚ի քաւիչ արիւնն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Վարձր բարբառով

” աղաղակէր և ասէր . մկրտութիւնս այս  
” լիցի ինձ՝ ՚ի լուացումն մեղաց իմոց՝ և ՚ի  
” ծնունդս նորոգութե՛ վերստին Հոգւոյն  
” սրբոյ . և ճաշակումն անմահ խորհրդոյս  
” ՚ի ժառանգութի երկնաւոր որդեգրուեն ”  
(Պատմ . Վարդանակ . Եղանակ , ը . Եղլ . 132 .  
Տապէնագրութեանց Եղէցի . պատմ . ՚ի Վահեպիկ .  
1838 ) :

Խօսվածքը ամէն նախնի հայրապետաց  
պէս ըլլալը բաւական է ցըցընելու թէ հաւ  
աւատքն ալ անոնց համաձայն է . և տեղի  
չկայ ըսելու թէ՝ ՚ի մահ տեառն Յիսուսի  
Քրիստոսի մկրտըլիլը՝ անոր մարմնոյն և աւ  
բեանը հաղորդ ըլլալ կը սեպվի . և պատ  
միշն ալ միտքը այն է : Յսոր նման զրուց  
վածքներու համար նորաղանդները ասանկ  
մեկնութիւն կուտան . բայց այս աեղս  
այդպիսի մեկնութիւն ամենեւին չի վեր  
ցըներ . ատոնց հասկընալու սխալ միտքը  
մոգպետը կ'ուղղէ , մկրտըլելէն և հաղոր  
դըլելէն եաքը ըրած աղօթքովլը . որուն  
մէջ՝ ճաշակուն անմահ խորհրդոյս կ'ըսէ . որ  
մկրտութէն տարբեր բան է : Համառօտ մը  
այս ալ նշանակել պէտք է՝ որ այս մոգպետս  
քրիստոնէական հաւասաքը սորված ատենը՝  
հաւատոց համար բանտը դրվող կաթու  
ղիկոս և եպիսկոպոս և քահանայ և սար  
կաւագ , ասոր սորվեցուցեր էին որ մկրտ  
ութիւնը վերսպին ծնունդ է . և Եղաց ըստ  
յուն է . պարապ մէկ արարողութիւն մը

չէ : Այն ժամանակը տակաւին մկրտութիւնը վերատին ծնունդ չէ և մեղաց թողութեան օգուտ մը չունի ըսողներուն վարդապետութիւնը երեւան ելած չէր : Եւ այն մարդիկը՝ որ եկեղեցւոյ հաւատքը ետքի ժամանակները աւրբված է ըսելով նորոգելու և աւրբված տեղերը շիտկելու ձեռք զարկածի պէս կը պըտըտին , պէտք չէր որ հին եկեղեցւոյ այս վարդապետութիւնս ձգեն , և իմաստակ խօսքերով մանիքեցւոց և պեղագեանց աղանդը նորոգող տասնեւթեցերորդ դարուն քանի մի աղանդաւորներուն խօսքը հաւատացեալներուն իբրեւ աւետարանակոն ժարողութիւն ծախեն :

Յիշեալ խօսքին մէջ սուրբն Եղիշէ մոդպետին դարձը պատմելով՝ եկեղեցւոյ հաւատքը համառօտ խօսքով որպէս թէ նշանակեր է . բայց աւելի ընդարձակ և վարդապետօրէն բացատրած է հայրմերի մեկնութեան մէջ այս խօսքովս : “ Ուսուցանէր տէրն մեր յաղօթան աղաչել առ ինքն՝ զհաց մեր օր ըստ օրէ տո՛ւր մեզ , ո՞չ յերկրէ , այլ ՚ի տեառնէ . յայտ է թէ և ո՞չ յերկնից , այլ զտէրն ամենեցուն : ” Այս է , ասէ , իմ մարմինն , և այս է իմ արիւնն : Ծէպէտ և անփշելի էր՝ վասն սիրոյ քո փշրեցաւ . և զքեզ՝ որ ՚ի կամ քո փշրեցար , անփշելի աստուածութք յինքն յարեաց . — ո՞չ թողցես զանձն իմ ՚ի

”դժոխս . և ոչ տացես սրբոյ քում տեսա .  
”նելզապականութիւն : Յուրբաթու խա .  
”չեցաւ ’ի փշումն մահու . ’ի միաշաբա .  
”թոջ զփշեալ ոսկերսն Ադամայ ժողո .  
”վեաց և յարեաց յանմահութիւնն , և ե .  
”ըեւեցոց բաղմաց ճշմարտութեամբ և  
”ոչ առաջօք . մի օր հացացաւ ’ի վերնա .  
”տանն , և հանապաղ հացանայ յեկեղե .  
”ցիս ’ի վերայ սուրբ սեղանոյն . նախ ին .  
”քըն յինքենէ ճաշակեաց , և ապա զմեղ  
”զամենեսեան ճաշակիցս արար նմին չար .  
”չարանաց” (Վագենագր . Եղվա . Էլլ . 225) :

Երանելի վարդապետը սուրբ խորհրդ  
դոյս վրայօք եկեղեցւոյ վարդապետութիւնը  
ասկէց աւելի յայտնի խօսքով չէր կըրնար  
բացատրել . և միաքը աղէկ մը հասկըցը  
նելու համար բառ մըն ալ կը գործածէ ,  
որ մոքին վրայ ամենեւին երկբայութեան  
տեղի չի թողուր : Քրիստոսի համար կ’ը .  
սէ . մի օր հացացաւ ”ի վերնապունն , և հանապաղ  
հացանայ յեկեղեցիս : Այս հացանալը առաջին վր .  
րայ խորհրդածութեան արժանի բան կայ ,  
որ չեմք կըրնար զանց ընել : Քրիստոսի հա .  
մար հարդացաւ և հարմացաւ կ’ըսվի սովորա .  
բար . և սուրբ խորհրդոյս նկատմամբը  
հացացաւ ալ կ’ըսվի . ասոնց իմաստին մէջ  
համեմատութիւն մը կայ : և հարդացաւ բա .  
ռին նշանակութիւնը աստուածաբանօրէն  
քննեմք նէ՝ նոյն մտօք հացացաւ ըսելն ալ  
ինչպէս հասկըցվիլը շուտով երեան կ’ելլէ :

Քրիստոս որդին Աստուծոյ մարդ եղաւ նէ՝ մարդկային անձն չառաւ . բայց մարդկային բնութիւնը անանկ կատարել առաւ որ , թէ որ անոր հետ Բանն աստուած չմիանայր նէ՝ անիկայ ինքնին մէկ մարդկային անձն մը կ'ըլլար . Բանն աստուած անոր հետ միաւորելով անձն եղաւ . ուստի կ'ըսեմք կատարեալ Աստուած և կատարեալ մարդ : Անոր համար Քրիստոսի ըրած գործքերուն մէջ թէպէտ բաժանում մը կայ . մարդկային և տատուածային գործքերը իրարմէ կը տարբերին . բայց գործողը միշտ մի և նոյն անձն է , Որդին աստուծոյ . անոր համար կ'ըսվի , “ Աստուած մարմնով վասն իմ խաչեալ ” . Աստուած՝ խաչվողն է . բայց խաչվելուն գործը ըստ մարդկութեան կամ մարդկային բնութեան յատուկ ըլլալուն համար , որովհետեւ Աստուած ինքնին անչարչարելի է , ճարմանը բառն ալքով կը դրսի :

Այս համեմատութեամբս հայացաւ բառն ալքննեմք նէ՝ եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութիւնը կը գըտնեմք : Հացը անձն չունի . այլ անձին տեղը անոր գոյութիւնն է : Քրիստոս իր մարմնովը հաց կ'ըլլայ ըսելը՝ հացին գոյութիւնը կը վերնայ և Քրիստոսի մարմնը կամ Քրիստոս ինքն մարմնովը այն գոյութեանը տեղը կը բռնէ ըսել է . ինչպէս որ Քրիստոս մարդկ'ըլլայ ըսելը՝ մարդկային անձն կը վեր-

նայ՝ և աստուածային բանին անձնաւութիւնը անոր տեղը կը բրոնէ ըսել է։ Այս ծանօթութեանս վրայ՝ հացը հաց մնալով Քրիստոս ալ մարմնովը կուգայ անոր հետ կը միանայ ըսելը ուղղափառ եւ կեղեցւոյ վարդապետութեան հետ չի միաբանիր. Աեստորի դրութեանը հետ աւելի կը միաբանի։ Ասոնք կ'ըսէին որ՝ Իշանին աստուծոյ անձը՝ մարդկային մէկ անձն մը ընտրեց և անոր հետ միացաւ, այսինքն՝ անոր մէջը բնակեցաւ. ինչպէս որ սուրբ մարդոց սրտին մէջը կը բնակէր. և Քրիստոսի և հասարակ սրբոց մէջ միայն այս տարբերութիւնս կը դնէին, որ աստուած երբեմն սրբոց քովէն կը ընար հեռանալ, և սուրբերը ասով սուրբ և տապուածաղէեայ ըլլալէն կը դադարէին և կը ընացին մեղանչել։ Քրիստոս անմեղանչելի էր կ'ըսէին նեստորականները. անոր համար՝ որ Իշանն աստուած անկից բնաւ պիտի չի զատվէր. միշտ անոր մէջը պիտի բնակէր։ Արազանդներուն մէջէն ալ ով որ հաղորդութեան խորհրդոյն համար կ'ըսէ թէ՝ հացը հաց մնալով Քրիստոս ալ մարմնովը անոր հետ կը միանայ, նեստորականաց մարդեղութեան խորհրդոյն վրայ ունեցած դաւանութեանը պէս դաւանութիւն մը կ'ունենայ հաղորդութե խորհրդոյն վրայ։

## 26. ՍՈՒՐԲԻ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Այս սուրբ հայրապետա ալ թարգմանը չաց աշակերտներէն է, և սրբոյն Առվելափառ խորենացւոյ և Եղիշէի աշակերտակից է : Հայոց կաթուղիկոս Եղաւ Քրիստոսի 480 թուին, Եկեղեցական բարեկարգութիւններով հայաստանեայց Եկեղեցին պայծառացոց . վեց տարի ու կէս հայրապետութիւն ըրաւ . և 487 թուին մեռաւ :

Ասիկայ Ճառեր շինած ունի . որոնց մէջէն մէկ քանին հին օրինակագիրները ըստոթելով սրբոյն Եփրեմի կարծած են : Հոս բերելու վկայութիւններս այն Ճառերէն են . և Հոս ասիկայ կ'իմացընեմք , որ թէ և այս խօսքերս Յովհան մանդակունիինը Եղած ըլլան , և սրբոյն Եփրեմինը Եղած ըլլան նէ , մեր խօսքը բնաւ չեն տրկարացըներ , այլ աւելի կը զօրացընեն . վրկայութիւնները մեր դրածէն հարիւր տարի մըն ալ աւելի հին ցըցընելով :

Այս Ճառերուս մէջէն են սա վկայութինները : “Պատարագաւն ՚ի մարմնոյ Արդւոյն աստուծոյ կերակրիս” (Ճառ. թ. Եղի. 17) : “Օ մէղուցեալսն ասլաշխարութեամք արդարացն . զքաղցեալսն ՚ի մարմնոյն Քնի կերակրեա . զծարաւեալսն արեամքն Քնի արբոն” (Ճառ. թ. Եղի. 77) : Կարելի է այս խօսքիս ծուռ մեկնութիւն տուռող ըլլայ , բարոյական մոքի տանելով և ըսելով :

որ մարմին և արիւն Քրիստոսի ըսելլ՝ աս-  
տուածային վարդապետութիւն ըսել է ,  
որ Քրիստոս մարմին և արիւն առնելով  
աշխարհք եկաւ մեզի սորվեցընելու հա-  
մար : Այսպիսի քաշքըշուք մեկնութիւն  
մը լսած եմ . բայց շատ ծաղրական բան  
է հայրապետի մը խօսք ալ նորաղանդից  
կրօնքին և մոլորաւթեանը համաձայն բե-  
րելու համար այսպէս քաշքըշելով մեկնե-  
լը : Եւ ասիկայ այն կը ցըցընէ՝ ինչ որ ա-  
ռաջկուց լսած եմք . հայրապետները ա-  
մէնքն ալ մոլորեր են ըսելով բացարձակա-  
պէս վճիռ տալը ծանր կուգայ կոր . աւե-  
տարանին ամենապարզ զրուցվածքներէն  
այլաբանական միտք հանածներնուն պէս՝  
հայրապետաց լսածներէն ալ ասանկ միտ-  
քեր կը հանեն կոր . և ինչպէս որ աւետա-  
րանը այլաբանօրէն մեկնենին կը ցըցընէ  
որ չե՞ն կրնար յայտնի խօսքով աւետարանը  
ուրանալ , թէ և իրենց կարծիքին դէմ  
սորվեցընէ , նմանապէս հայրապետի մը  
խօսք ծռելով մեկնութիւն տալերնին կը  
ցըցընէ որ պիտի չի կրնան անոր խօսքն ալ  
չընդունիլ , թէ և իրենց դէմ ըլլայ : Դանք  
սուրբ հայրապետին մէկ ուրիշ խօսքին :

“ Արմնոյ տեառն հաղորդիս , և զլէ-  
” գողանալ կամիս՝ թաքուցանելով զթշնա-  
” մութիւնն քո ընդ ընկերին : Այս . և կա-  
” յէն գողանալ կամէր զլչստուած՝ թա-  
” քուցանելով զեղբօրն սպանութիւն . և

„արդ՝ տե՛ս զերերումն տատանման նորա՝  
 „զչար խորհրդոյն զպտուղն : Որ ՚ի մարմինն  
 „տեառն մերձենայ՝ և թշնամութիւն ընդ  
 „ընկերին ունիցի , ոչ մարմին կենարար է  
 „նմա՝ այլ հուր կիղանող . զի դատաստան  
 „անձին իւրում ուտէ և ըմպէ : Այլ ո-  
 „մանք ոչ եթէ վն փափաքելոյ սրբոյ խոր-  
 „հրդոյն փութան ՚ի հաշտուի ընկերին ,  
 „այլ աւուրբք բազումք հեռանան ՚ի սրբոյ  
 „խորհրդոյն ՚ի մարմնոյն և յարենէն Քնի ”  
 (Ճառ . ԺԷ . ԵղՂ . 96) : “ Առ ոչինչ համա-  
 „րեցայք զսրբութիւնս մարմնոյ և արեանն  
 „Քրիստոսի , զոր հանապազ ընդունիք յա-  
 „հաւոր և ՚ի սոսկալի սեղանոյն ” (Ճառ .  
 ԺԷ . ԵղՂ . 124) :

## 27. ՍՈՒՐԲՆ ՕԳՈՍՏԻՆՈՍ

Հինգերորդ դարու մէջ եղած հայոց  
 հայրապետներուն և վարդապետներուն  
 վկայութիւնը տեսնելէն ետքը՝ հիմա տես-  
 նենք թէ ուրիշ հայրապետներ ինչպէս կը  
 բացատրեն եկեղեցւոյ իրենց ատենը ու-  
 նեցած հաւատոքը և դաւանութիւնը :

Հինգերորդ դարու հայրապետներուն  
 մէջ երեւելի է սուրբն Օգոստինոս , ո-  
 րուն նորազանդներն ալ շատ մեծ յարդու-  
 թիւն կուտան , և սուրբ անունով կը յի-  
 շեն . և սուրբ ըսողը՝ կամ ընդունել պէտք  
 է ասոր համար թէ ուղղափառ էր , աստ-

ուածային վարդապետութեան դէմ բան  
չէր սորվեցըներ , կամ ըսելու է թէ հա-  
ւատքի մէջ մոլորած մարդիկ ալ կրնան որ  
և աստուածահաճոյ ըլլալ . որկէց կը հե-  
տեւի՝ որ հաւատքը մարդոյս փրկութեան  
հարկաւոր բան մը չէ ըսեն : Անը տգէտ  
նորազանդները հետեւութիւն հանելէ կը  
վախնան և տրամաբանութիւն չեն սիրեր  
նէ՝ կամաւ կուրանալ է . իրենց աղանդը  
հաստատելու համար ըլլայ նէ՝ ծուռ տրա-  
մաբանութիւններ ընելէն չեն փախչիր .  
միայն շխատակ տրամաբանութիւնն է որ ա-  
նոնց ատելի է , որովհետեւ անոնց ըսա-  
ծին ծուռթիւնը ամէնուն աչքին առաջը  
յայտնի կ'ընէ :

Առերբն Օդոստինոս ծնաւ Ափրիկէի  
Դակասգէքաղաքը , Քնի 354 թուին . չա-  
փահաս եղած ատենը՝ որովհետեւ կրակոտ  
երիտասարդ մըն էր , մանիքեցւոց աղան-  
դոյն հետեւել սկսաւ . բայց ետքը սուրբ  
Ամբրոսիոսի քարողները իրեն շատ ազգե-  
ցին . և մօրը Արբուհի Աննիկային աղօժ-  
քովն ալ միտքը լուսաւորվելով մանիքեց-  
ւոց աղանդը ձգեց և մլրտեցաւ 387  
թուին : Չորս տարի ետքը՝ 391 ին՝ Հիու-  
պոն քաղաքի Վաղերիոս եպիսկոպոսին օգ-  
նական ըլլալու համար եպիսկոպոս ձեռ-  
նադրեցաւ , և 395 ին Վաղերիոս մեռնե-  
լով՝ անոր տեղը սուրբն Օդոստինոս յա-  
ջորդեց : Ուէ եպիսկոպոսութենէն առաջ

և թէ՛ ետքը՝ եկեղեցւոյ հաւատոյն և բարեկարգութեանը դէմ ելող մանիքեցիներուն, պեղագեաններուն, դոնատեաններուն և արիոսականներուն՝ և հաւատոց թշնամի կուապաշտ վիլիսոփայններուն հետ խօսքով և գրով կը վիճէր, և եկեղեցւոյ ղաւակները մոլորութենէ կը պահպանէր՝ և հեթանոսաց զրպարտութեանը դէմ կը ջատագովէր : Անուաւ Նիսպոն քաղաքին մէջ՝ 430 թուին . Երբ որ Նիսպոն քաղաքը Վանտալները պաշարեր էին :

Կար բաղմաթիւ գիրքերուն մէջէն՝ որ խորհրդոյս վրայօք խօսածները ամէնն ալ չեմք կրնար ժողվել . Երկու Երեք հատը բաւական սեպեմք : Ութսուն և Երեքերորդ քարոզին մէջ կ'ըսէ ժողովուրդին . «Պարտաւոր Եղած Եմ ձեզի՝ որ մկրտված էք, տէրունական սեղանոյն խորհուրդը բացատրելու համար Ճառ մը խօսելու : Նիմակ այս սեղանս կը տեսնէք կոր . և անցած գիշեր ասոր հաղորդ ալ Եղաք : Պէտք է գիտնալ թէ ի՞նչ բան է այն որ առիք և կ'առնէք և ամէն օր սկիտի առնէք : Անուանին վրայ տեսած հացերնիդ տեառն մերոյ խօսքովը որբագործըվելով՝ Յիսուսի Քրիստոսի մարմինն է . և բաժակը, կամ մանաւանդ բաժակին մէջինը՝ Վատուծոյ խօսքովը որբըվելով՝ Յիսուսի Քրիստոսի արիւնն է » :

Այլմոսին 14. գլուխին խորագրին վրայ

խօսելով, որ եօթանասնից թարգ մանուենէ  
 մէջ գրած է եղեր թէ «Օ ինքը իր ձեռքը  
 » առաւ», կ'ըսէ . «Ասիկայ մարդու ինչ  
 » պէս կրնայ ըլլալ . Եղբարք՝ ասիկայ ով  
 » կրնայ հասկընալ . քանզի որ մարդն է որ  
 » ճշմարտապէս զինքը իր ձեռքին մէջը կը<sup>1</sup>  
 » բռնէ : Ամէն մարդ կրնայ մէկ ուրիշ  
 » մարդու մը ձեռք բռնըվիլ . բայց մարդ  
 » չի կրնար զինքը իր ձեռքը բռնել : Չենք  
 » կրնար հասկընալ թէ ասիկայ ինչպէս նը-  
 » կարագրական մոօք կրնայ Դաւիթի հա-  
 » մար հասկըցվիլ . այլ Յիսուսի Քրիստո-  
 » սի համար հասկըցվելիքը դիւրաւ կ'ի-  
 » մացվի : Քանզի Յիսուս Քրիստոսիր մար-  
 » մինը առաքեալներուն տալով — Այս է  
 » մարմին իմ — ըսած ատենը իր մարմինը  
 » իր ձեռքն էր » : Այս խօսքերովս սուրբ  
 հայրապետը յայտնի կ'իմացընէ թէ հա-  
 ղորդութիւնը Քրիստոսի իսկական մար-  
 մին և արիւն կը ճանչնար . օրինակ կամ  
 պատկեր կամ նմանութիւն կամ յիշատակ  
 չեր ճանչնար : Ամէն մարդ ինչպէս որ հի-  
 մայ՝ նոյնպէս սուրբ (Օգոստինոսի ատենն-  
 ալ դիւրաւ կը հասկընային թէ մարդ մը  
 շատ մեծ դժուարութիւն չի քաշեր իրեն  
 պատկերը կամ նմանութիւնը կամ յիշա-  
 տակը իր ձեռքը բռնելու : Աւ ինչպէս  
 որ հիմա՝ անանկ ալ այն ատենը չի հաս-  
 կըցվելու բան մըն էր թէ ինչպէս մարդ  
 իր անձը իրեն ձեռքը կընայ բռնել : Այս

գժուարութիւնս և անհնարութիւն սուրբն  
Օդոստինոս ցըցընելով՝ իր խօսքին միտքը  
անանկյայտնի բացեր է, որ չի հասկընա-  
լը և ծըռելը անհնար է :

Անգղիայի Քէնդըրապրի քաղաքին արք  
եպիսկոպոսը Դիլոդսօն, որ 1694 թուին  
մեռաւ, գոյափոխութեան ճառին մէջ  
կ'աշխատի իր գիրքը կարդացողներուն հաւ-  
արցընելու թէ սուրբն (Օդոստինոս ալ  
հիմակվան կալվինականներուն պէս կը հա-  
ւասար. և քանի մը անանկ վկայութիւն-  
ներ կը բերէ՝ որ ուղղափառ մտքով հաս-  
կըցվիլը աւելի յարմար է. ինչպէս է այն՝  
որ սուրբ հայրապետը սաղմոսին ՎՃ. գլու-  
խին մեկնութեանը մէջ Քրիստոսի բեր-  
նէն առաքեալներուն կ'ըսէ. «Պէտք է որ  
»իմ ձեզի ըսած խօսքս դուք հոգեւոր մըտ-  
»քով առնեք. դուք այս մարմինը պիտի  
»չուտէք՝ որ կը տեսնեք, և զիս խաչը հա-  
»նողներուն թափած արիւնը պիտի չի խը-  
»մէք : Չեզի մէկ խորհուրդ մը տուի, որ  
»հոգեւորապէս իմանաք նէ՝ ձեզի կեանք  
»պիտի տայ »: Թէ որ այս խօսքս Դիլ-  
լոդսօնին հասկըցածին պէս հասկընալու ըե-  
լամք նէ՝ սուրբն (Օդոստինոս ինքն ինչ  
մտքի վրայ ըլլալը չեմք կրնար գիտնալ. ո-  
րովհետեւ մէկ հեղինակ մը իրարու հա-  
կառակ խօսք ըսէ և գրէ նէ՝ իրեն բուն  
միտքը չի հասկըցվիլը : Չեմք կըրնար ալը-  
սելթէ այլ և այլ ժամանակ այլ և այլ

կարծիք ուներ սուրբը . և մէկ ատենի  
 կարծիքը սխալ ըլլալը իմանար նէ՝ ետքը  
 կը փոխէր . հաղորդուել վրայ ունեցած կար-  
 ծիքն ալ այս խօսքովս փոխեց ըսել ըլլար .  
 քանզի նոյն ՆԸ . սաղմոսին մեկնուել մէջ այս  
 խօսքս ալ կը կարդամք . “Որովհետեւ այս  
 “աշխարհքիս մէջ այս մարմնովս ապրեւ  
 “ցաւ , և բուն այս մարմինս մեզի տուաւ  
 “որ ուտեմք մեր փրկութեանը համար ,  
 “ուստի մարդ թող չուտէ այս մարմինս ա-  
 “ռանց առաջկուց երկրպագելու , որուն  
 “առաքեալները երկրպագութիւն ըրին ,  
 “և հիմայ ալ երկրպագութիւն կ'ըւլլվի  
 “խորհուրդներուն մէջ” : Ասիկայ ‘Դիւ-  
 լոդսոն չէ յիշած . բայց հարկ էր յիշել և  
 մէկալ խօսքին հետ միաբանելուն ճամբան  
 գրտնել . որ սուրբն (Օդոստինոս իրարու  
 հակառական խօսքեր խօսած ըլլալով վկա-  
 յութիւնը չի տկարանայ . քանզի իրեն ալ  
 դիտաւորութեանը դէմ էր այս հայրապե-  
 տըս մէկ խօսքի վրայ չի կեցող մարդ մը ցը-  
 ցընելը : Անոր համար՝ (Օդոստինոսի խօս-  
 քերուն մէկ մասը յիշել և իրեն վկայ բե-  
 րելը , և մէկալ մասին ամենեւին խօսքը  
 ընելը՝ բըռնած դատին կատարելապէս  
 տէրութիւն չի կրնալ ընելու նշան մըն է :  
 Ո՞եզի դիւրին է սրբոյն (Օդոստինոսի խօս-  
 քերը իրարու հետ միաբանել ամենապարզ  
 կերպով : Հաղորդութե՛ խորհուրդը Քը-  
 րիաստափ մարմինը չէ ըսած չունի սուրբ

Հայրապետը պարզանդ . այլ կ'ըսէ . “ Դուք  
ու այս մարմինը պիտի չուտէք՝ որ կը պեսնե՞ ”  
և այլն : Այս պարագայներս եվելցընելով  
ըսել կ'ուղէ . երբ որ Քրիստոսի խօսքը  
լսողները գայթակղեցան , կարծիքնին այն  
էր որ Քրիստոս ինչպէս որ այն ատենը ի-  
րենց մէջը կը տեսնէին արտաքին երեսյթ-  
քին կողմաննէ , անանկ պիտի ուտեն . բայց  
անանկ չէր խսկապէս . Քրիստոս ուտվե-  
լու հացի կերպարանքի տակ պահված պի-  
տի ըլլար . անանկ որ՝ ուտելիքնին Քրիս-  
տոսի մարմինն էր էապէս . բայց երեսյթ-  
քին նայելով՝ Քրիստոսի մարմինը չէր .  
այսինքն՝ Քրիստոսի մարմնոյն արտաքին ե-  
րեւոյթքը չունէր : Եւ Քրիստոսի բուն  
մարմինը ըլլալը՝ մարմնոյ զգայարանքնե-  
րուն վկայութքը ստուգելով չէր ճանչցը-  
վեր , հաւատքով կը ճանչցըվէր : Այս է  
Դիլոդսօնին բերած վկայութեանը վեր-  
ջին խօսքը . “ Չեղի մէկ խորհուրդ մը տը-  
ւի , որ հոգեւորապէս ինձնաս նէ՝ ձեղի կեանք  
պիտի տայ ” : Տես ինչ որ խօսեցանք Քր-  
իստոսի “ Հոգին է կենդանարար , մար-  
մին ինչ ոչ օգնէ ” խօսքին վրայ , գոր-  
ծոյս առաջին մասին մէջ . և Պատքասիոսի  
և Ուագուամնոսի վէճերուն վրայ՝ այս երկ-  
րորդ մասինս առաջին տետրակին սկիզբը-  
և անոնք աղէկ մը միաքըդ առնելէդ ետ-  
քը՝ հայրապետաց խօսքերուն մէջ իրարու-  
հակառակ բան չես գըտներ : Եւ թէ որ

սուրբ (Օդոստինոսին գիրքերուն մէջքանի մը տեղ՝ սուրբ խորհրդոյս համար ձեւ և օրինակ գըրված գըտնեսնէ՝ յիշէ որ որ հայրապետը այն տեղերը լատիներէն Ֆիկուռա բառը գործ կ'ածէ . և այս Վիրիկեցի հայրապետիս գործածած բառին միտքը հասկընալու համար կարդա՛ ի՞նչ որ ըստնք Տերտուղիանոս ափրիկեցիին գործածած Ֆիկուռա բառին վրայ , երկրորդ մասին Ա . տետրակին մէջ , թիւ 6 :

‘Եցն Դիլոդսոն՝ և Պօղոպունը Օդոստինոսի գրուածոց մէջէն ուրիշ խօսքեր ալ գտեր են ցըցընելու համար՝ որ նը հայրապետը հաղորդութեւ խորհրդոյն մէջ Քրիստոսի մարմին և արիւն չի ճանչնար : Ասոնք ալ տեսնեմք թէ ի՞նչ խօսքեր են :

Առողջն (Օդոստինոս (Գիրք ընտրէմ թղթոյ Հիմանց , գլ. 6) . կ'ըսէ եղեր՝ որ մէկ մարմին մը չի կըրնար մէկ ուրիշ մարմնոյ մէջ թափանցել . անանկ որ՝ թէպէտ երկու մարմին իրարուքով կամ իրարու մէջ կամ իրարու վրայ կըրնան ըլլալ , բայց մէկ և անբաժանելի տեղւոյ մը մէջ երկու մարմին մէկ տեղ չեն կրնար ըլլալ : Եւ կ'ըսեն . թէ որ Քրիստոսի ճշմարիտ մարմինը հաղորդութեան խորհրդոյն մէջն է նէ՝ հարկ է որ ասիկայ ըլլայ , հացնու Քրիստոսի մարմինը , գինին ու Քրիստոսի արիւնը մէկ տեղ ըլլան : Բայց ասանկ ըսելովնին կ'իմացընեն որ եկեղեցւոյ հաւատքը չեն հասկըցած : Այ

Եկեղեցին հազորդութե՛ խորհրդոյն վրայօք  
ունեցած դաւանութեանը մէջ անանկ չի  
հաւատար՝ որ Քրիստոսի մարմինը հացին  
մէջ կը թափանցէ , և հացն ու մարմինը  
մէկ տեղ կ'ըլլան : Աստիկայ մէկ ուրիշ աղանդ  
մըն է՝ որ լատիներէն Կմբանացիօ կ'ըսվի . որ-  
պէս թէ՝ հացին մէջը ըւլլէ : Եկեղեցին այս  
վարդապետութիս ընդունիր . այլ անանկ  
կը դաւանի՝ որ հացը Քրիստոսի մարմին ըլ-  
լալէն ետքը հաց չէ . միայն հացի կերպա-  
րանք և հանգամանք ունի . բուն էութիւր՝  
Քրիստոսի մարմին է . և ասով միայն մէկ  
բան մը ըլլալով՝ թափանցելու երկու մար-  
մին չկայ . հացի յատկութիւն և Քրիստո-  
սի մարմին կայ : Աստիկայ ըսելնիս՝ հազոր-  
դութեան խորհրդոյն համար է . բայց ու-  
րիշ բաններու վրայօք չեմք ընդունիր թէ  
մարմինը բացարձակապէս անթափանցելի  
ըսած ըլլայ նը հայրապետը . անանկ մոքով՝  
որպէս թէ հրաշքով ալ երկու մարմին իրա-  
րու թափանցելնին անհնար ըլլայ : Այս  
անհնարութիւնս ընդունող մարդը չեմ  
գիտեր թէ ինչպէս կը մեկնէ այն՝ որ Քրիս-  
տոս յարութիւն առնելէն ետքը՝ առա-  
քեալներուն գըտնըլած սենեակը մոտաւ ,  
երբոր առաքեալները մէկ սենեակի մը մէջ  
ժողվըլած էին , և հրեայներէն վախնալ-  
նուն համար գուռը գոցեր էին (Յով. ի.  
19 . 26) . և սուրբն (Օդոստինոս մէկ հը-  
րաշք մը պատմելով՝ պատմութիւնը լը-

մընցընելէն ետքը կ'ըսէ . “ Օ այս ոչ հաւատատան այնոքիկ ոմանք , որք և զտեառնն Յիսուսի ընդ անխախտելի կուսական արդանդ մօրն անցանել Հաւատատան . ( ասանկէ Պօղօպո , որ ասոր անտեղի և ծաղրական կարծիք կ'ըսէ ) . “ և ոչ զմտանել առ աշակերտու դրօքն փակելովք ” ( Յշ. Հաղաքին Աստո-ծոյ . Գր . իբ . Գլ . 8 . Իշլ . 605 . պատ . հայ . Վ Էնէպ . 1841 ) : Կնանկէ Ենէ՝ սբյն Օգոստինոսի այս խօսքս ըսելը՝ բնականի վրայ հասկընալու է . հրաշքի վրայ չի հասկըցվիր :

‘ Եցն սուրբն ( Օգոստինոս կ'ըսէ ( Բնէրէմ Փռափռսի . Գր . ի . Գլ . 11 ) . ‘ Բն մարմնաւորապէս չի կըրնար մի և նոյն ժամանակի մէջ շատ մը տեղ մէկէն գտնըվիլ . ինչպէս որ մանիքեցիները կ'ըսէին թէ մի և նոյն ատենի մէջ խաչին վրայ էր , և լուսնին մէջ և արեւուն մէջ . և այլն : Յիշեալ նուրաղանդ մատենագիրները ուղղափառաց դաւանութիւնը մանիքեցւոց այս խօսքիս նմանցընելով՝ սրբոյն ( Օգոստինոսի մանիքեցիներուն դէմըսածը ուղղափառաց ալդէմ կը կարծեն : Բայց ասոնց մէջ մէկ մէծ տարբերութիւնը մարմինը մէկ առաջօք բան մը կը կարծէին . և այլ և այլ տեղեր գըտնըվիլը մի և նոյն ատենի մէջ հրաշք չէին սեպեր , մէկընական բան մը կըսեպէին . սուրբն ( Օգոստինոս մէկ մարմնոյն մի և նոյն ատենի մէջ շատ տեղ բյալուն բնապէս հնարաւո

բութիւնը չընդունիր . բայց բնաւ մէկ  
տեղ մըն ալըսած չունի թէ հրաշովալ ա-  
սիկայ չի կըքնար ըլլալ :

Նոյն սուրբ հայրապետը կ'ըսէ ( Յնտեմ  
Փոստոսի . իմթ . 2 ) . թէ որ ՚Քրիստոս մար-  
դոս զգայարանացը վկայութելը դէմ գա-  
լու բան մը ըրաւ նէ՝ հասարակութիւնը  
խաբած կ'ըլլայ . և թէ որ մեր զգայարանաց  
վկայութեանը պիտի չի կըքնամք վստահիլ  
նէ՝ քրիստոնէական հաւատոց ճշմարտու-  
թիւնը ամէնը մէկէն կործանած կ'ըլլայ :  
Ասանկ ըսող ուրիշ հայրապետներ ալ կան :  
Բայց պէտք է տեսնել թէ ինչ պարագայի  
մէջ և ինչ բանի համար ասոնք ասանկ ը-  
սին : Այս պարագայներս չի նայիմք նէ՝ յիշ-  
եալ հայրապետներուն վկայութիւնը ձեռք  
առնելով հրեայներուն ալ կըքնամք իրա-  
ւունք տալ , որ ՚Քրիստոս աստուածական  
փառօք չերեւեցաւ անոնց , և չի ճանցան .  
անոր համար խաչը հանեցին . քանզի իրենց  
զգայարանացը հաւատացին , որ ՚Քրիստո-  
սի աստուածութեանը համար վկայութի  
մը չէր տար անոնց . « Եթէ էր ծանուցել՝  
ոչ արդեօք զտէրն փառաց ՚ի խաչ հանէին »  
( ա . կորն . բ . 8 ) : Եւ հրեայները ՚Քրիս-  
տոս լոկ մարդ տեսնելով կ'ըսէին . « Վա-  
սըն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզքար-  
կոծ , այլ վասն հայհոյութեան , և զի դու  
մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես »  
( Յնչ . ժ . 33 ) : Եւ երբ որ Պետրոս առա-

քեալ Քրիստոսի Որդի աստուծոյ ըլլալը  
 խոսառվանեցաւ նէ՝ Քրիստոս ըստ . “Ե-  
 րանի քեզ Ախմովն որդի Յովեանու . զի  
 մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ , այլ  
 չայր իմ որ յերկինս է ” (Աշտթ. ժղ. 17) :  
 Քանզի Քրիստոսի Որդի աստուծոյ ըլլալը  
 Պետրոս զգայարանաց վկայութիւնովը չի  
 կըրցաւ ճանչնալ . թէ որ զգայարանացը  
 հաւատար նէ՝ մեկալ հրեայներէն աւելի  
 բան մը սորմենալիք չունէր , որ Քրիստոս  
 սոսկապէս մարդ գիտէին : Այս մտքիս վր-  
 այ առնելով մենք աւելի իրաւունք կ'ու-  
 նենամք սուրբ (Օգոստինոսին խօսքը դար-  
 ձընելու և ըսելու . թէ որ բոլորովին մեր  
 զգայարանացը վկայութեանը հաւատալու  
 ըլլամք նէ՝ քրիստոնէական հաւատոց ճըշ-  
 մարտութիւնը ամենը մեկէն կը կործանի :  
 Այս ըսած խօսքիս համար հարկ է ըսել որ  
 սուրբն (Օգոստինոս) և ով որ Քրիստոսի  
 աստուածութիւնը կը դաւանի նէ ամենքն  
 ալ պիտի ընդունին . նաև հաղորդութե-  
 մէջ Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու ար-  
 իւնը ըլլալը չի հաւատացողներուն մշջէն  
 անոնք որ Քրիստոսի ճշմարիտ Աստուած-  
 ըլլալը կը դաւանին՝ հարկ է որ զգայարա-  
 նաց վկայածէն զատ բանի հաւատան . և  
 ամեն բանի մէջ զգայարանաց վկայութեան  
 կապմելը մարդս ուղղակի անհաւատութե-  
 մէջ կը ճգէ ըսեն : Եւ սրբոյն (Օգոստի-  
 նոսի ցըցուցած սկզբունքը ասոր հետ միա-

բանելու համար հարկ է ընդհանուր մրտ-  
քի չառնել վերսիշեալ խօսքը . այլ տես-  
նել թէ ինչ պարագայի մէջ խօսեցաւ . և  
միայն այն պարագային և անոր նման պարա-  
գայներուն համար հասկընալ :

Առաջին (Օգոստինոս Փոստոս մանիքե-  
ցիին դէմ կը խօսէր : Փոստոս՝ և ուրիշ ա-  
մէն մանիքեցիները կ'ըսէին որ Վրիտոսո  
Ճշմարիտ մարմին չունէր . միայն երեւոյթ  
մընէր . ինչպէս որ երազ տեսնողները մարդ-  
մը կը տեսնեն և անոր հետ կը խօսին , բայց  
իրօք և Ճշմարտութեամբ անանկ մարդ մը  
չի կայ : Կոկեց կը հետեւէր՝ որ Վրիտոսո  
աշխարհքի վրայ մարդու կերպարանօք տես-  
նողները շարունակ իրենց զգայարանաց  
վկայութեանը հաւատալով կը խաբվէին .  
մարդ մը տեսնել կը կարծէին , որ մանի-  
քեցւոց կարծեօքը՝ մարդ չէր , լոկ երե-  
ւոյթ մըն էր : Եւ որովհետեւ Վրիտոսո  
աշխարհի վրկութեան համար ինչ ըրաւ և  
կրեց նէ՝ մարմնով էր , և ասոնք կ'ըսէին  
թէ մարմինը Ճշմարիտ չէր՝ երեւոյթ մըն  
էր , ասկեց կը հետեւէր ըսել թէ Վրիտ-  
ոսո Ճշմարտապէս չի ծնաւ . չի թլփատե-  
ցաւ , չի մլրտեցաւ , չի քարոզեց , խաչը  
չելաւ , և այն . այլ ասոնք ամէնն ալ ե-  
րեւոյթ էին . և ասով բոլոր քրիտոննէու-  
թիւնը անգոյ երեւոյթի մը վրայ հիմնած  
կ'ըլլար : Կոտր համար սուրբն (Օգոստինոս  
կ'ըսէր . թէ որ մեր զգայարանաց վկայու-

թեանը չի վստահիմք նէ՝ քրիստոնէական  
հաւասարը բոլորովին կ'ոչընչանայ :

Առուրբն Օգոստինոս կ'ըսէ . թէ որ  
Քրիստոս մարդոյս զգայարանաց դէմ բան  
ըրաւ նէ՝ մարդիկ խաբած կ'ըլլայ : Ասիկայ  
մենք ալ կ'ըսեմք . բայց խաբած ըլլալու  
համար մէկ ամենահարկաւոր պայման մը  
կայ : Յէ որ Քրիստոս մարդոյս զգայարա-  
նաց դէմ բան ըրաւ՝ և ճարտոց վեճացուց որ  
այն բանին վրայօք ճարտու իր շգայարանացը վե-  
հանապայ , յիրաւի խաբած կ'ըլլայ : Քրիս-  
տոս տէրն մեր իր տալու հացին իրեն մար-  
մինը ըլլալը անանկ յայտնի խօսեցաւ , այս  
բանիս վրայօք հաւատոց հարկաւորութիւր  
այնքան աղէկ խմացուց , որ հրեայները ա-  
սոր հաւատալու համար յատուկ հրաշք  
ուղեցին . ասիկայ Յովանեփայ տղան չէմի ,  
ինչպէս Երկինքէն ինջայ կ'ըսէ ըսին . իրեն  
մարմինը ինչպէս մեղի կրնայ կերցընել ը-  
սին . այդ խօսքը խիստ է՝ ատիկայ ովլ կրր-  
նայ լսել ըսին . Քրիստոս միշտ հաւատք  
կը պահանջէր . ճարմին ինչ ո՛չ օգնէ ըսելով  
զգայարանաց վկայութեան բաւական չըլ-  
լալը կը հասկրցընէր . և բոլոր գլուխին  
մէջ գոնէ մէկ բառ մըն ալ չկայ՝ որ հրո-  
ւեայներուն խմացածը միսալ ըլլալը խմացը-  
նէ : Ուստի պինտ վերջը ամենն ալ տըր-  
տընջելով ձգեցին գացին : Այսքան յայտնի  
և հաստատ վկայութիւն Քրիստոսի բեր-  
նէն սորված ըլլալնուս ետքը թէ որ Քր

կամեցաւ որ տակաւին մեր զգայարանաց վկայութեանը հակառակ գալու բան չընէ այս խորհրդոյս մէջ, բոլոր քրիստոնեայները մէկէն խաբելը այս կ'ըլլայ. ասկէց աւելի մարդ խաբել չի կրնար ըլլալ՝ որ իւրեն մարմինը խոստանայ հացի կերպարանքի տակ տալու, և ետքը լոկ հաց տայ՝ իւրեն մարմինը յիշատակելու համար :

Դիլոդսոն և Պօղօպու կը կտրծեն որ նքն Օգոստինոս իրենց խորհածին պէս կը խօսի. բայց ուրիշ նորազանդները այն մըտքին վրայ չեն : «Նորազանդներուն պարագլուխը | ուտեր՝ կ'ըսէ, «Ապքրամանդէրները » (հաղորդութեածքի քայլարիտ մարմին և արիւն ըլլալը չի հաւատացողները) » սուրբ Օգոստինոսը իրենց պաշտպան կը » բռնեն . քանզի շատ տեղ խորհուրդ և ան » պեսանելք նշան բառերը գործ կ'ածէ : Ինձի » անանկ կուգայ որ՝ առաքեալներէն ետքը » եկեղեցին նը (Օգոստինոսէն աւելի գեւ » բազանց վարդապետ մը չունեցաւ : Բայց » Ապքրամանդէրները այս նը և պատուա » կան վարդապետս անանկ ամօթալի կեր » պով աւրեցին (խօսքը ծրումը կելով), որ » հայհոյութեամբ լեցուն մէկ հերետիկու » սութեան մը իբրև երաշխաւոր և պաշտ » պան՝ ասոր խօսքը վկայութի կը բերեն » : | ուտեր Ապքրամանդէրներուն թշնամի էր, բայց հայրապետներուն ալ շատ բարեկամ չէր . թէ որ նքն Օգոստինոս իրեն գիտ-

ցածին դէմ գտնէր նէ՝ բնաւ երբէք խիղճ  
չէր ըներ անիկայ ալ մերժելու և հերե-  
տիկոս է ըսելու, ինչպէս որ ամէնուն հա-  
մար մէկէն ըսաւ թէ Պօղոս առաքելոյն  
խօսքը չի հասկընալով խաբվեցան։ Ասանկ  
մարդ մը երբ որ սրբոյն Օգոստինոսի հա-  
մար ասանկ վկայութիւն կուտայ նէ՝ բուն  
իրեն միտքը և իրեն երեւցածը կը խօսի։

Եւ թէ որ ըսես՝ որ Ապրամանդէրները  
սուրբ Օգոստինոսը բունած ըլլալնուն հա-  
մար ասանկ կը խօսի որ վկայներնուն մէջէն  
երեւելիներուն մէկը պակսեցընէ և անոնք  
տկարացընէ, ասոր ալ պատասխան ունիմ  
տալու։ Ապրամանդէրներուն մէջէն ալ  
հասկըցող կար որ Օգոստինոսը իրենց վկայ  
բունելով կը սխալին։ Օսբինեան, որ Ապ-  
րամանդէրներուն աղանդապետ Օսուինկ  
լիին աշակերտն էր, և մեռաւ 1626 թուին,  
խնդիր կը հանէ թէ ինչու համար սուրբն  
Օգոստինոս իրենց ըսածին պէս ըսեր հա-  
ղորդութե՛ վրայօք։ Իրենց պէս ըսելուն  
վրայ երկբայութիւն չունի։ պատճառը  
հասկընալ կ'ուղէ։ Եւ կ'ըսէ։ «Հիպատոնի  
» եպիսկոպոսը քաղաքական դիտմամբ խը-  
» նայութեամբ կը խօսի, իր միտքը յայտ-  
» նի խօսելու չի համարձակիր։ հասարակաց  
» հաւատին յայտնի ՛՛ Ե-ՂԵԼ՛՛։ Ա՛նք  
ալ հայրապետներուն վկայութիւնը այս  
ճառիս մէջ կը ժողվեմք նէ՝ մոքերնիս այն  
չէ որ այս կամ այն հայրապետը ինչպէս կը

Հաւատասային նէ գիտնամք , այլ այն պիտի  
սորվիմք թէ այն հայրապետներուն ատե .  
նը եկեղեցին ինչպէս կը հաւատար : Այն  
Օդոստինոսի օրը եկեղեցին անանկ կը հա-  
ւատար՝ ինչպէս որ հիմա կը հաւատայ  
Օսբինեան ասանկ կը վկայէ . և ասիկայ  
մեզի հերիք է : Վնացածը թող Օսբին-  
եան մտածէ , թէ սբ հայրապետը վախ-  
կու և կեղծաւոր և հաւատքը ծածկող  
մարդ մը ցըցընելէն ետքը շատ կրնայ մի  
վստահ ըլլալ անոր խօսքին :

Վէկ ուրիշ կալվինական մը՝ Ժիւրէօ  
անուն , սուրբ Օդոստինոսի համար մար-  
դարէանալու ձեռք կը զարնէ . “ Վարդ չի  
ոկրնար ինձի հաւատը նել կ'ըսէ , որ այս  
“ վարդապետութիւնս պաշտպանողները  
“ ( սուրբն Ափարիանոս և սուրբն Օդոս-  
“ տինոս ) ասիկայ ճշմարիտ կարծեն ” :  
Քայց Ժիւրէօ այս խօսքով՝ Թաղէս փիլի-  
սովային պէս ըրեր է . որ երկինքը նայե-  
լով աստեղըները կը դիտէր . առ ջեւի փո-  
սը չի տեսաւ մէջը ինկաւ , հայրապետաց  
միտքը մարդարէանալու խելքը տալով՝ ի-  
րեն դէմ զրուցվելու խօսքը մարդարէանա-  
լը մոռցեր է : Ծէ որ սուրբն Օդոստինոս  
սրտանց ալ ըսածին պէս կը հաւատար նէ՝  
անկեղծ մարդ էր . և այս անկեղծ Օդոստի-  
նոսը մեզի դաւանակից և հաւատակից է՝  
իր ժամանակի բոլոր քրիստոնէից հետ մէկ  
տեղ : Ծէ որ ըսածին պէս չէր հաւատար

նէ՝ ըսածը բոլոր քրիստոնէից ըսածին համատ էր . չէ՞ նէ՝ ինչու համար քրիստոնէից դաւանութեանն ու իր գիտցածին մէկէն գէմ խօսի : Հիմայ ալ ուղղափառ քրիստոնէից հաւատքը անոր ըսած և սորմեցուցած հաւատքն է : Յառղնորազանդները տեսնեն թէ Ճիւրէօյին մարդարէուիր մէկ բաւական փաստի մը տեղ կրնայ մի բռնել իրենց մէջը . և անոր ըսածին նայելով կրնան մի ըսել թէ սր (Օդոստինոս կեղծաւոր մարդ մըն էր . սրտիւ նորազանդներուն ըսածին պէս կը հաւատար . և բերնով և դրով ուղղափառաց պէս կը քարոզէր : Յայտնի ըսածը մենք վկայութիւն կ'առնեմք . նորազանդներն ալ ուղեր են ասի կայ իրենց վկայ ունենալ . ըսած խօսքը իրենց հերիք կը սեպեն , միտքը ասանկ էր՝ բայց յայտնի խօսելու վախցաւ ըսելով : Ո՞եր վկայութիւն բերածը՝ սուրբ (Օդոստինոսի ատենը ընդհանուր Ակեղեցւոյ ընդունած հաւատքն է , որուն սուրբն (Օդոստինոս յայտնի կը վկայէ : Նորազանդներուն վկայն է ընդհանուր Ակեղեցւոյ հաւատքն զատիլող՝ և անով մտքին մէջ հերետիկոսութիւ ունեցող առանձին վարդապետի մը Տատէն անցածը , որ բնաւ մէկ տեղ մըն ալ յայտնի խօսելու չէ համարձակեր , Հասարակաց հաւատքին յայտնի Դպչէլ ըսովը : Ատանկ վկայութիւնները մեզի գէմ զօրութիւն չունին : (Օդոստինոսի

միաբը գրածին պէս ըլլալը Ժիւրէօյին ի-  
մացընողը՝ նորազանդներուն ընտանի սուրբ  
հոգին եղած սղիտի ըլլայ . ուրիշ նորա-  
զանդներն ալ շատ պարզամիտ են, որ ա-  
սոր հոգի սպռութան և մոլորութան ըլլալը ա-  
սանկ յայտնի նշանով ալ չեն իմանար :

## 28. ՍՈՒՐԲՆ ԿԻՒՐԵԴ ԱՆՔԻՑԱՆԴՐԱՑԻ

Եկեղեցւոյ ուղղափառ հաւատոյն  
պաշտպան և Նեստորի աղանդոյն ախոյեան .  
Քնի 412 թուին Եղեքանդրիոյ պատրիարք  
եղաւ . և 444 թուին մեռաւ : Գրածները  
գրեթէ ամենն ալ Նեստորի մոլորութեր  
դէմ են . որուն աղանդը դատապարտըլիւ-  
ցաւ առաջ ։ ուոմքաղաքը 430 թուին  
մէկ մասնաւոր ժողովքի մը մէջ . ետքը 431  
թուին՝ Եփեսոսի ընդհանրական ժողով-  
քին մէջ :

Ասոր խօսքն է սա հետեւեալս . որ Ե-  
փեսոսի ժողովոյն մէջն ալ կարդացվեցաւ ,  
և ամենուն ընդունելի եղաւ : “ Խոստո-  
” վանիմք զպատարագս օրհնութեան կա-  
” տարեալ յեկեղեցիս . այսպէս մերձե-  
” նամք ՚ի խորհուրդն օրհնութեան . և  
” սրբիմք յորժամկցորդիմք սուրբ մարմնոյն  
” և պատուական արեան փրկչին ամենայ-  
” նի Յիսուսի Գրիստոսի : Եւ ոչ եթէ իբ-  
” րեւ զլոկ մարմին ընդունիմք , քաւ լիցի ,  
” և ոչ իբրեւ զմարդոյ սրբեցելոյ ՚ի բանն

”իբրեւ ՚ի պատիւ միութեան . և իբրեւ  
”զաստուածութեանն քնակիչ ունելով  
”յինքեան : Այլ իբրեւ զկենդանարար  
”Ճշմարտութեամբ և ՚ի բանին մարմին .  
”զի կենդանի է քնութեամբ իբրեւ զած .  
”և վասն զի միացաւ ՚ի մարմինն իւր , կեն-  
”դանասորեցցց զնա : Օ ՚ի թէպէտ և ա-  
”սիցէ ցմեղ , եթէ արդարեւ ասեմ ձեղ .  
”եթէ ոչ կերիջեք զմարմին որդւոյ մար-  
”դոյ , և ըմակիցէք զարիւն նորա , ոչ իբ-  
”րեւ զմարդոյ որ իբրեւ զմի ՚ի մէնջ հա-  
”մարիցիմբ : Քանզի զլարդ էր հնար ե-  
”թէ մարդոյ մարմին որ քնութիւ իբրեւ  
”զմեղ իցէ , եթէ կարիցէ լինել կենդանա-  
”րար . այլ Ճշմարտութիւ միացցց իւր վասն  
”մեր մարմին , և եղեւ մարդ և յորջորջե-  
”ցաւ որդի մարդոյ ” ( Առաջն առ Աւագոր :  
Պարապմանց . Աղ . 467 · 468 ) :

Ո՞եկ ուրիշ տեղ մը կ'ըսէ . “ Յէտ որ  
” Քրիստոս միայն լոկ մարդ էր նէ՝ ինչ-  
” պէս կըրնայ ըսվիլ թէ այս սեղանոյս մօ-  
” տեցողներուն յաւիտենական կեանք կու-  
” տայ : Եւ ինչպէս կըրնայ առանց մանրը-  
” վելու բաժնըվիլ , և մի և նոյն ատենի  
” մէջ հոս և ամէն տեղ մէկէն ըլլալ ” :  
( Ճառ ՚ի խորհրդական ընթիւն ) : “ Այն Ճառին  
” մէջ կ'ըսէ . “ Այն իսկ կենաց մարմինը առ-  
” նեմք , որ մեզի համար առաջկուց մեր  
” մարմնոյն մէջը բնակած է : Կենաց սրբ-  
” բացուցիչ արիւնը խմենք , հաւատով

„ Խոստովանելով որ՝ Քրիստոս միանգամայն  
 „ քահանայ է և պատարագ . որ կը նուիրէ  
 „ և կը նուիրիվի . կ'ընդունի և կուտայ ։  
 Եւ Յովհաննու աւետարանին մեկնութեած  
 մշջ կ'ըսէ . “ Ո՞եղ ամենքս որ մարմնով և  
 „ հոգւով իրարմէ բաժնըված և զատված  
 եմք , թէ Աստուծոյ , և թէ իրարու  
 „ հետ մէկ ընելու համար՝ միածին Որդին  
 „ աստուծոյ մէկ հնարք մը գտաւ , որ իր  
 „ իմաստութեանը և իր հօրը խորհրդոյն  
 „ գիւտն է : Քանզի խորհրդական հաղոր  
 „ դութեան մշջ ամեն հաւասարցեալները  
 „ մէկ մարմինով միացընողը՝ բուն իր մար  
 „ մինն է , որ թէ իրեն և թէ իրարու հետ  
 „ ամենը մէկ մարմին կ'ընէ : Եւ ասանկ  
 „ մէկ հատիկ մարմնով Յիսուս Քրիստոսի  
 „ հետ կապվելով մէկ եղողները ով կընայ  
 „ իրարու հետ ունեցած բնական միութեած  
 „ նէն քակել ու բաժնել : Ուրեմն՝ մենք  
 „ ամենքս մէկ հացի մը հաղորդ կ'ըլլամք  
 „ կոր նէ՝ ամենքս մէկ մարմին մը կ'ըլլամք .  
 „ քանզի Քրիստոսի մարմինը չի կընար բաժ  
 „ նըվիլ : Ասոր համար եկեղեցին ալ Քրիս  
 „ տոսի մարմին կ'ըսվի . և մենք անոր ան  
 „ դամքները կ'ըսվինք՝ ինչպէս որ սուրբն  
 „ Պօղոս կ'ըսէ . քանզի ամենքս Յիսուսի  
 „ Քրիստոսի սուրբ մարմնովը անոր հետ  
 „ միացած եմք , մեր մարմնոյն մշջ ընդու  
 „ նելով այն մէկ հատիկ և անբաժանելի  
 „ մարմինը . որով մեր անդամքները տւելի  
 „ անորը կ'ըլլան , քան թէ մերը ։”

## 29. ՀԵՏՈՆԴԻՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ ՀՌՈՎՄԱՅ

Եկեղեցւոյ երեւելի հայրապետաց մէկըն է . որ իրեն հայրապետութեան ատենը Եւտիքէս հերետիկոսը գատապարտեց 431 թուին Քաղիեդոնի ժողովոյն հայրապետաներուն խրկած նամակովը , Հռոմքաղաքը մանիքեցիներէն մաքրեց . և մեռաւ Քրիստոսի 461 թուին :

Ասոր խօսքն է հետեւեալո : « Տէրն մեր ըսած ըլլալով , թէ որ որդւոյ մարդոյ մարմինը չուտեէք և արիւնը չի խմեք նէ՝ ձեր մէջը կեանք պիտի չունենաք , պէտք է որ սեղանոյն հազորդիք . անանկ՝ որ Յիսուսի Քրիստոսի մարմնոյն և արեանը ձըշ մարտութեանը վրայ բնաւ երկրայութիւն չունենաք : Քանզի հաւատքով հաւատացածքը բերանով կ'ընդունիս . և թէ որ ընդունածիդ դէմ վէճ պիտի հանես նէ՝ ամէն ( ձշմարիտ է ) ըսելըդ պարապ կ'երթայ » : ( Ճառ վեցերրր ՚ի պահս եօլներր ամսեան ) :

## 30. ԹԷՌԴԱՐԵՏՈՍ ԿԻՒՐԱՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Այս Յովհան ոսկեթերանէն զատ իրեն վարպետ ունեցաւ թէոդորոս մոպսուեստացին . որով Աեստորի աշակերտակից ըլլալով սնոր տէր ելաւ և սուրբ Կիւրեղաղէքսանդրացիին հետ աւրբավեցաւ . բայց

ետքը հաշտեցաւ . և 'Վեստորի մոլորու-  
թեանը դէմ ճառեր և գիրքեր գրեց : Ե.  
կեղեցական պատմութիւն և ճգնաւորաց  
պատմութիւն կամ հարանց վարք ալ շի-  
նած ունի : Վորուոց կիւրոս քաղաքին ե-  
պիսկոս եղաւ 420 թուին . և մեռաւ  
470 թուին :


Վախիկայ Ա. կորնթացւոց թղթոյն մեկ  
նութեանը մէջ կ'ըսէ . « Վռաքեալը կորն-  
» թացիներուն միտքը կը ձգէ այն ամենա-  
» սուրբ գիշերը , որ տէրն մեր Քրիստոս օ-  
» րինակ եղած զատիկը վերջացընելով այս  
» օրինակիս բուն ճշմարիտը ցըսուց , փրո-  
» կարար խորհրդոյն դրոները բացաւ , և  
» իր պատուական մարմինն ու պատուական  
» արիւնը տուաւ չէ թէ մինակ տասն և մէկ  
» առաքեալներուն . այլ և Յուդայի ալ » :  
Եւ քիչ մը ետքը կ'ըսէ . « Վա վՃիռս ,  
» — պարտական եղիցի մարմնոյ և արեան  
» տեառն — , կըցըցընէ որ , ինչպէս որ Յուդա  
» անիկայ մատնեց և հրեայները նախատե-  
» ցին , ասոր պէս անոր ամենասք մարմինը  
» իրենց պիղծ ձեռքը առնողները և իրենց  
» անմաքուր բերանը դընողները անոր նա-  
» խատինք ըրած կ'ըլլան » : Հաւատով հա-  
ղորդողներուն համար միայն չէ Քնի մար-  
մին և արիւն ըլլալը . այլ սրբագործութե-  
նէն ետքը այն բանը Քրիստոսի ճշմարիտ  
մարմին և արիւն կ'ըլլայ . կ'ուղէ առնողը  
հաւատով առնէ՝ կ'ուղէ անհաւատուք :

Այս է Թէոդորետոսի ըսած վերի խօսքը .  
Թէ Քրիստոս իրեն պատուական մարմինն  
ու արիւնը չէ թէ մինակ տասն և մէկ տ-  
ռաքեալներուն, այլև Յուդայի ալտուաւ :  
Թէ որ Քրիստոսի մարմին և արիւն ըլլալը  
առնողին հաւատքին կապված ըլլար նէ՝ մի-  
սյն տասն և մէկ առաքեալներուն առածը  
Քրիստոսի մարմին և արիւն կ'ըլլար . Յու-  
դայի առածը լոկ հաց և գինի կը մնար :

Այս Ամբրոսիոսի Թէոդոս թագաւորը  
Թեսաղոնիկոյ կոտորածին համար եկեղեցի-  
էն դուրս ընելը պատմելով Թէոդորետոս՝  
Ամբրոսիոսի ըսած խօսքը կը պատմէ որ թա-  
գաւորին ըսեր է . « Ի՞նչպէս պիտի համար  
» ձակիս աշխարհի փրկչին որ մարմինը շօ-  
» շափելու այդ ձեռքերովդ՝ որ թեսաղոնի-  
» կեցիները ջարդելովդ պղծեցան . ի՞նչպէս  
» պիտի համարձակիս այս պատուական ա-  
» րիւնը այն բերանը առնել, որ քու սաս-  
» տիկ բարկութեանդ ժամանակը այնքան  
» անմեղներուն արիւնը թափելու պատ-  
» ճառ եղող անիրաւ և անգութ հրամանը  
» տուաւ » (Պատմ. Եկեղ. Ե. 17) : Արբոյն  
Ամբրոսիոսի բերանը այս խօսքս տալով Թէ-  
ոդորետոս՝ այն սրբոյն օրը եղած եկեղեց-  
ւոյ հաւատքը կը հասկըցընէ . որ մինչեւ  
իր ատենն ալ փոխված չէր . իր հաւատքն  
ալ նոյնն էր :



2181



1846





UNSUBSTANTIATED & 1954 P.

